*թիւնը. արգելափակում ազգային հպարտութիւն պարգեւող մաշտոցեան օրերից հայի հանճարով ստեղծուած իմացական վիթխարի գանձարանը գրաբարեան լեզուի՝ հայորդի մտաւորական սերունդների հասողութիւնից.*

*«բ. հայոց լեզուի հնամենի բառապատկերների եղծումով եւ աղաւաղումով զրկում հայերէնը պատմա-մշակութային արժէւորումներից եւ ունեցած միջազգային նշանակութիւնից.*

*«գ. իմաստազրկում հայերէնի ունեցած միջազգային քաղաքակրթական նշանակութիւնից՝ ամլացուելով միջազգային հայագիտութեան ուսումնասիրման առարկայ դառնալուց:*

*«Խոհական ոչ մի ժողովուրդ, բնականաբար, նման զոհաբերութեան չէր գնայ վասն ինքնաթերարժէքման եւ... մշակութային խեղումների:*

*«Պահանջելով՝*

*«Վերադառնալ մաշտոցեան ուղղագրական համակարգին՝ որպէս մեր ազգային ինքնութեան վաւերականութեան» (տե՛ս «Արմաշ», էջ 86, նաեւ մեր աշխատութիւնը՝ «Հայ լեզուաբանութեան առաջացման պատմութիւնը...», հտ. Բ, էջ 405):*



# ԱՔԵՄԷՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XVIII ՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

ԲԱԲԿԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

*Պարսից թագաւոր Դարեհ Ա Վշտասպը (522-485 թթ.), յաղթանակ տանելով գահի համար մղուած պայքարում, Աքեմէնեան պարսից տէրութիւնը ենթարկեց վարչական վերաձեւումների, բաժանելով այն 20 սատրապութիւնների: Պատմահայը Հերոդոտոսի տեղեկութեան համաձայն՝ «Իւրաքանչիւր ազգի նա կցեց մերձակայ հարեւաններին եւ, բացի այդ, հեռաւոր ազգութիւններին միացրեց այս կամ այն իշխանութեանը»[1]: Հնարաւոր է, որ այս սկզբունքը երբեմն խախտուել է, կապուած, թերեւս, աշխարհագրական կամ տարածական գործօնի հետ, սակայն դժուար չէ տեսնել, որ պարսից արքունիքի նպատակը՝ որպէս պետական քաղաքականութիւն, եղել է ոչ թէ որեւէ ժողովրդի վարչական տրոհումը սատրապութիւնների մէջ, այլ մի քանիսին մէկ վարչական միաւորի մէջ ներառնելը: Ուստի կարծում ենք, յոյն պատմիչի տեղեկութիւնները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին նոր մեկնաբանութեան կարիք ունեն: Ըստ Հերոդոտոսի՝ «Պակտիւիկէից, արմէններից[2] եւ հարեւաններից մինչեւ Եւքսինեանը ստացւում է չորս հարիւր տաղանդ, սա տասներեքերորդ նահանգն էր»[3]: Ուսումնասիրողների ցայսօր քաղաքացիութիւն ստացած կարծիքով՝ Հայաստանին է վերաբերում նաեւ տասնութերորդ սատրապութեան նկարագրութիւնը, որի մասին ասւում է. «Մատիենների, սասպեյրների եւ ալարոդների վրայ սահմանուած էր երկու հարիւր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»[4]: Ստացւում է, չնայած բոլոր փաստերին եւ փաստարկումներին, մի անհեթեթ վիճակ: Մի կողմից՝ բոլոր տուեալները յստակ հաւաստում են հայ ժողովրդի գոյութիւնը Արեւելեան Հայաստանում, որտեղ փորձում են տեղադրել XVIII սատրապութիւնը, իսկ միւս կողմից՝ ըստ Հերոդոտոսի, վերջինս բնակեցուած է ոչ թէ հայերով, այլ մատիեններով, սասպեյրներով եւ ալարոդներով: Ուստի հակասական եւ իրարամերժ տեղեկութիւնները հաշտեցնելու նպատակով կամայ թէ ակամայ, ծնունդ է առնում այն եզրակացութիւնը, թէ ալարոդների տակ պէտք է հասկանալ հայերին կամ էլ հայացած ուրարտացիների հետնորդներին: Նման եզրակացութեան յանգել է Գ. Սարգսեանը, որն, անդրադառնալով այդ խնդրին, գրել է. «Արեւելեան (Հայաստանի - Ց. Բ.) մասի վերաբերեալ այդ (հարցուփորձից, պարսիկների եւ յոյների պատմածներից, լոգոգրափոսների գրառումներից) աղբիւրները լռել են, եւ Հերոդոտոսը նոյնիսկ չի իմացել, թէ Հայաստանը (Արմենիան) տարածւում է նաեւ այդ հողերում: Դրանց մասին նա տեղեկացել է միայն պարսկական պաշտօնական վաւերագրերից, այն էլ արամերէնից արուած յունական թարգմանութիւններից, որտեղ Հայաստանը (Արմենիան) հնացած ձեւով կոչուել է Ուրարտու: Այսպէս է պատահել, որ նա Արեւելեան Հայաստանը բնակեցրել է ալարոդներով (ուրարտացիներով), մինչդեռ այնտեղ հայերն են ապրել, ինչպէս այդ բխում է Բեհիստունեան արձանագրութեան մէջ այդ տարածքը Արմինա անուանելու փաստից: Ուրարտացիներն այդ ժամանակ այլեւս գոյութիւն չունէին, նրանք հայացել էին: Ուստի Հերոդոտոսի այս հատուածում յիշատակուած ալարոդների տակ միանշա-*

© National Library of Armenia

նակ կերպով պէտք է հասկանալ հայերին եւ վերը մէջ բերուած հատուածը (V, 94) հասկանալ այսպէս. «Մատիենների, սասպեյրների եւ ալարոդների վրայ սահմանուած էր 200 տաղանդ հարկ: Սա տասնութերորդ շրջանն է»[5]:

Այս, անշուշտ, վերին աստիճանի սրամիտ բացատրութիւնը, ցաւօք, հանդիպում է մի շարք դժուարութիւնների ներքոյիշեալ պատճառներով: Նախ, սատրապութիւնների ցուցակը եւ սատրապութիւնների մէջ մտնող ժողովուրդների ու ցեղերի ցանկը, անտարակոյս, Հերոդոտոսի ստեղծագործութիւնը չեն, որոնց հիմքում մասնակի դրուած լինէին յունական աղբիւրներ, իսկ միւս մասով պարսկական արամէագիր վաւերաթղթեր: Հազիւ թէ կարելի է կասկածել, որ այն ամբողջութեամբ ծագում է պարսկական մի ինչ-որ փաստաթղթից: Հետեւաբար ենթադրել, թէ պարսիկները հայերի մի մասին անուանել են արմէնՀներ, իսկ միւս մասին՝ ալարոդՀներ, անընդունելի է: Բացառութեամբ կասպերի, որոնք յիշատակւում են երկու առանձին սատրապութիւնների մէջ եւ, որ կարեւորն է, նոյն անունով եւ այդ իրողութիւնը յատուկ քննութիւն է պահանջում, միւս բոլոր դէպքերում ժողովուրդները վարչականօրէն երբեք չեն բաժանւում, ուստի, աւելի շուտ, պէտք է ենթադրել, որ ամբողջ Հայաստանն է մտել տասներեքերորդ սատրապութեան մէջ, քան թէ վերջինիս տարածքում ստեղծուել են XIII եւ XVIII սատրապութիւնները:

Սակայն ամենաարտառոցն այն է, որ ասուածի լոյսով եւ ցայսօր հայագիտութեան մէջ արմատացած տեսակէտներով առաջնորդուելու դէպքում ստիպուած ենք յանգելու մի անհեթեթ եզրայանգման, թէ մակեդոնական-սելեւկեան շրջանում անգամ այսրեփրատեան Արմենիան ընդգրկել է միայն Ծոփքը, Աղձնիքը, Տուրուբերանը, Վանա լճի աւազանը եւ Այրարատի մի մասը[6]: Եւ այդ այն դէպքում, երբ վանեան թագաւոր Ռուսա Ա-ի թողած Ծովինարի արձանագրութեան տուեալները յստակօրէն արձանագրում են հայկական ցեղերի գոյութիւնը Արցախի եւ Ուտիքի տարածքում մ. թ. ա. VIII դարում[7]: Հետեւաբար, որքան էլ ցաւագին լինի որոշ կարծրացած տեսակէտների վերանայումը, պէտք է նորովի լուսաբանել Այսրկովկասի եւ Հայաստանի էթնիկ պատմութեան մի շարք խնդիրներ:

Հերոդոտոսի կողմից բերուած Դարեհ Ա-ի կազմաւորած սատրապութիւնների ցուցակը միանշանակ չի ընդունւում ուսումնասիրողների կողմից: Պատճառն այն է, որ Հերոդոտոսի հաղորդման տուեալներն իբր չեն համապատասխանում պարսից թագաւորների արձանագրութիւններում տրուած սատրապութիւնների հերթականութեանը: Ըստ որում, յատկապէս բարդութիւններ է յարուցում Այսրկովկասում եւ Միջին Ասիայում տեղորոշուող սատրապութիւնների թէ՛ տեղադրութեան եւ թէ՛ սահմանների խնդիրը: Օրինակ՝ XVI սատրապութեան մէջ Հերոդոտոսը յիշատակում է Պարթեւստանը, Արեան, Սոգդը եւ Խորեզմը, իսկ արձանագրութիւններում դրանք սովորաբար հանդէս են գալիս առանձին, եւ Սոգդը սովորաբար յիշւում է Բակտրիայի հետ մէկտեղ[8]: Նմանատիպ անհամապատասխանութիւնները առաջ են բերել այն միտքը, որ Պատմահօր ցուցակը նրա կամ նրան աղբիւր ծառայած Հեկատէոսին յայտնի երկրների եւ ժողովուրդների կամայական խմբաւորման արդիւնք է[9]: Այսուհանդերձ, ուսումնասիրողների գերակշիռ մասը հակուած է կարծելու, որ Հերոդոտոսեան ցուցակը արժէքաւոր է, չնայած անհամապատասխանութիւնների խնդրին տալիս է տարբեր բացատրութիւններ[10]: Զխորանալով խնդրիս մէջ՝ լոկ նշենք, որ, համաձայն Ի. Մ. Դեակոնովի, Հերոդոտոսի ցուցակի հիմքում պարսկական պաշտօնական աղբիւր է ընկած, եւ որ Պատմահօր ցուցակում սատրապութիւնները թուարկուած են նրանց Մարական տէրութեանը եւ այնուհետեւ Աքեմենեան պետութեանը միացնելու հերթականութեամբ[11]: Այս, անկասկած, սրամիտ եզրակացութիւնը, այնուամենայնիւ, յարուցում է որոշ դժուարութիւններ: Այդ դէպքում ինչո՞ւ առաջինը յիշատակւում են արեւմտեան եւ ոչ թէ կենտրոնական ու արեւելեան սատրապութիւնները: Կամ, ասենք, ինչո՞ւ Բաբելոնը Ասորեստանի հետ միասին կազմում է միասնական սատրապութիւն, երբ այն Մարական պետութեանը չի միացուել: Ուստի, ելնելով ցուցակի հերթականութիւնից եւ սատրապութիւնների տեղադրութիւնից, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ սատրապութիւնների թուարկման հերթականութիւնը պայմանաւորուած է նրանց ձեւաւորման ժամանակագրական հերթականութեամբ: Վարչական մեծ վերակառուցումները, որոնք ձեռնարկուեցին Դարեհ Ա-ի կողմից, պահանջում էին մեծ ժամանակ եւ կապուած էին որոշակի դժուարութիւնների հետ: Պարսից արքայից արքան, ամէն ինչից դատելով, վարչական վերափոխումներն սկսեց սկզբում արեւմտեան երկրամասերում, որոնց ժողովուրդների համար դեռ խորթ էր իրանական (մարական կամ պարսկական) տիրապետութիւնը, ի տարբերութիւն կենտրոնական ու արեւելեան երկրամասերի, որոնք, երկար ժամանակով գտնուելով մարական տիրապետութեան ներքոյ, եթէ անգամ չէին հաշտուել իրանական գերիշխանութեան հետ, ստիպուած էին եղել համակերպուել դրան: Մեր կարծիքով՝ Հերոդոտոսը կամ նրա աղբիւր Հեկատէոսը որեւէ ձեւով չեն աղաւաղել պարսկական պաշտօնական աղբիւրը եւ Աքեմենեան Պարսկաստանի վարչական բաժանումը ներկայացրել են անփոփոխ, սակայն վիճաբանութիւններ յարուցող Հերոդոտեան ցուցակի աղբիւրը, դժբախտաբար, պարզապէս մեզ չի հասել: Հարկ ենք համարում ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել այն իրողութեան վրայ, որ Դարեհ Ա-ի թողած արձանագրութիւններում կայսրութեան մէջ մտած երկրների ցուցակները չէին կարող համապատասխանել սատրապութիւնների Հերոդոտեան նկարագրութեանը, որովհետեւ դրանք վերաբերում են մինչվերափոխումների ժամանակաշրջանին: Պարսից տէրութեան համար մինչեւ վարչական վերակառուցումները, ամէն մի երկիր, ըստ էութեան, ներկայացնում էր վարչական մէկ միաւոր, սակայն սատրապութիւնների ստեղծումով վարչական բաժանման հիմքում դրուեց միանգամայն նոր գաղափար՝ վարչական մէկ միաւորի մէջ ներառնել մի քանի երկրներ կամ ժողովուրդներ, որոնց գլուխ կանգնած պարսից սատրապը միշտ էլ կարող էր, նրանց միմեանց դէմ գրգռելով ու հակադրելով, ապահովել պարսից գերիշխանութիւնը կամ տիրապետութիւնը: Հերոդոտեան սատրապութիւնների նկարագրութիւնն արձանագրում է հէնց այս վիճակը:

Արդ, ինչպէ՞ս ենք մենք պատկերացնում Պարսից տէրութեան վարչական բաժանման իրականացման ընթացքը: Համաձայն մեր քննութեան՝ սկզբում կազմաւորուել են կայսրութեան արեւմտեան 6 սատրապութիւնները, որոնք տարածական առումով ընդգրկել են Փոքր Ասիան, Ասորիքը եւ Եգիպտոսը: Ուշադրութիւն է գրաւում այն փաստը, որ սատրապու-



© National Library of Armenia

թիւնները թուարկուած եւ նկարագրուած են արեւմուտքից արեւելք, հարաւ եւ հարաւ-արեւմուտք ուղղութեամբ: Առաջին սատրապութիւնը ներառնում էր Հոնիացիներին կամ հոնիական յոյներին, ասիական մագնետներին, էոլացիներին, կարիացիներին, լիւկիացիներին, միլիւացիներին եւ պամփիւլացիներին, այսինքն՝ զբաղեցնում էր Փոքր Ասիայի արեւմտեան եւ հարաւ-արեւմտեան շրջանները: Երկրորդը բովանդակում էր միսիացիներին, լիւդիացիներին, լաստոններին, կաբալներին եւ հիւտեններին՝ զբաղեցնելով առաջին սատրապութիւնից դէպի հիւսիս ընկած հողերը: Երրորդ սատրապութեան մէջ էին մտնում, այսպէս կոչուած, աջակողմեան հելլեսպոնտացիները, փռիւգացիները, Ասիայի թրակացիները, պափլագոնացիները, մարիանդինները եւ սիրիացիները (փոքրասիական), որոնք բնակւում էին Փոքր Ասիայի հիւսիս-արեւմտեան եւ կենտրոնական շրջաններում: Հարուստ եւ բարգաւաճ Կիլիկիան կազմում էր մէկ առանձին սատրապութիւն՝ թուով չորրորդը, որի տարածքը ձեւաւորուել էր դեռեւս Կիլիկիայի թագաւորութեան գոյութեան շրջանում: Ասորիքը Կիլիկիայի սահմանագլխին գտնուող Պոսիդէոն քաղաքից մինչեւ Եգիպտոս, ներառեալ ամբողջ Փինիկիան եւ Պաղեստինեան Սիրիան կամ Ասորիքը եւ Կիպրոսը, կազմում էր հինգերորդ սատրապութիւնը, իսկ Եգիպտոսը Լիբիայի, Կիրենէի ու Բարկայի հետ՝ վեցերորդը[12]:

Թերեւս կարող է զարմանք յարուցել մեր կողմից սատրապութիւնների հարցին այսպէս մանրակրկիտ անդրադառնալը, սակայն հետագայ քննութիւնը հասկանալի կը դարձնի դրա անհրաժեշտութիւնը: Թւում է, թէ այս յիշատակուած 6 սատրապութիւնից յետոյ պէտք է նկարագրուէին Հայաստանը, Այսրկովկասեան երկրները, Միջագետքը, Մարաստանը եւ այլն: Սակայն եօթերորդ սատրապութիւնը յայտնւում է կայսրութեան ծայր արեւելեան շրջաններում՝ իր մէջ ունենալով Սատտագիտներին, գանդարիներին, դադիկներին եւ ապարիտներին: Ուսումնասիրողները նշուած սատրապութիւնը տեղադրում են Փեշավարի եւ արդի Աֆղանստանի հարաւային շրջանում[13]: Ութերորդ սատրապութիւնը զբաղեցրել է Շոշի կամ Սուզայի շրջանը եւ կիսսիեցիների երկրի մնացած մասը, այսինքն՝ կարծես ցուցակը կորցնում է իր տրամաբանական շարունակութիւնը՝ թռիչք կատարելով Փեշավարի շրջանից Էլամ՝ ներկայիս Իրանի հարաւ-արեւմտեան հատուածը: Այնուհետեւ ցուցակի աշխարհագրական հերթականութիւնը վերականգնւում է: Իններորդ սատրապութիւնը գտնուել է Սուզիանայի կամ Շուշանի հարեւանութեամբ՝ զբաղեցնելով Բաբելոնը եւ Ասորեստանը, տասներորդը՝ յիշեալ երկուսի հարեւանութեամբ, ընդգրկելով Ագբատանան (ներկայիս Համադանը), Մարաստանի մնացած մասը, պարիկաններին եւ օրթոկորիբանտիներին, տասնմէկերորդը՝ Մարաստանի հիւսիսում, ներառնելով կասպերին, պաւսիկներին, պանտիմաթներին եւ դարեյտներին: Տասներկուերորդ սատրապութիւնը, որ ներառնում էր բակտրիացիներից մինչեւ Այգլեր ընկած երկիրը, այլ խօսքով՝ Ամուդարեա գետի վերին հոսանքի շրջանը կամ Հիւսիս-արեւելեան Աֆղանստանը շրջակայ տարածքներով, յայտնւում է եօթերորդ սատրապութեան հարեւանութեամբ[14]: Հերոդոտեան ցուցակի քարտէզագրումը, կամայ թէ ակամայ, ստիպում է մտածել, որ VII-XI սատրապութիւնների կազմաւորումը կատարուել է վարչական վերակառուցումների երկրորդ փուլում: Արտաքնապէս այս խմբին կարծես թէ պէտք է միացնել նաեւ տասներկուերորդ սատրապութիւնը, սակայն



այդ տրամաբանական կլինէր միայն այն դէպքում, եթէ վերջինս ցուցակում զբաղեցնէր ութերորդ եւ ոչ թէ տասներկուերորդ տեղը: Ուստի մնում է ենթադրել, որ պարսից արքունիքը, ինչ-ինչ շարժառիթներից ելնելով, վարչական վերակառուցումներն իրականացրել է տէրութեան արեւելեան լեռնային մի հատուածում եւ Պարսքից արեւմուտք ու հիւսիս ընկած երկրներում:

Վարչական վերակառուցումների երրորդ փուլում կազմաւորւում են տասներկուերորդ եւ տասներեքերորդ սատրապութիւնները, որոնցից վերջինը զբաղեցնում էր Հայաստանի եւ Պակտիւիկէ երկրի (իմա՛ Պատուկա) տարածքը՝ ծաւալուելով մինչեւ Եւքսինեան Պոնտոսի կամ Սեւ ծովի ափերը: Չորրորդ փուլում ձեւաւորւում են XIV-XVII սատրապութիւնները, որոնք տարածւում էին Արալեան ծովի ափերից մինչեւ Պարսից ծոց եւ Հնդկական ովկիանոս: Վարչական վերակառուցումների վերջին փուլում կազմւում են տասնութերորդ, տասնիններորդ եւ քսաներորդ սատրապութիւնները, որոնցից առաջինը, ինչպէս նշել ենք, ընդգրկում էր մատիենեներին, սասպեյրներին եւ ալարոդներին, երկրորդը՝ մոսքերին, տիբարենեներին, մակրոններին, մոսինոյկներին եւ մարերին, իսկ վերջինը՝ հնդիկներին[15]:

Թէ ինչո՞վ էր պայմանաւորուած նման հերթականութիւնը, անշուշտ առանձին ուսումնասիրութեան նիւթ է, որը քիչ է առնչւում մեր բուն խնդրի հետ: Տուեալ դէպքում մեզ համար կարեւորը վարչական վերակառուցումների փուլերի բացայայտումն է: Ոչ պակաս կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ տասնութերորդ եւ տասնիններորդ սատրապութիւնները ստեղծուել են միաժամանակ՝ Հայաստանում սատրապութիւն ձեւաւորելուց անհամեմատ ուշ: Կարելի է աւելացնել նաեւ, որ պարսկական վարչակարգի հաստատումը բազմամարդ բնակչութիւն ունեցող հնդկական հողերում, ինչպէս նաեւ սկիթական ցեղերով հեղեղուած այսրկովկասեան երկրներում մեծ դժուարութիւն էր ներկայացնում, որի պատճառով էլ արքունիքը դրանց վարչական վերակառուցմանը ձեռնամուխ է լինում ամենավերջինը եւ այն էլ ոչ արմատական ձեւով, քանի որ, ըստ երեւոյթին, տասնիններորդ սատրապութեան ազդեցութեան ներքոյ գտնուող կոլխերի երկիրը եւ նրանց հարեւան ցեղերը, որոնք բնակւում էին մինչեւ Կովկաս լեռը, որը պարսից պետութեան սահմանն էր, միայն ընծաներ էին մատուցում պարսից արքունիքին՝ հազար տղայ եւ հարիւր աղջիկ եւ այն էլ հինգ տարին մէկ անգամ[16]: Ապահարկ էին եւ լոկ ընծաներ էին մատուցում նաեւ արաբները, Եգիպտոսին սահմանակից եթովպացիները եւ որոշ այլ ցեղեր[17]:

Տասնութերորդ սատրապութիւնը Հայաստանի տարածքում տեղադրող գիտնականները առաջնորդւում են հետեւեալ հանգամանքներով: Ցենուելով Հերոդոտոսի տուեալների վրայ՝ նրանք մատիենեներին տեղադրում են Ուրմիոյ լճի աւազանում եւ շրջակայքում, սասպեյրներին դիտում են որպէս քարթուելալեզու ժողովուրդ եւ տեղորոշում Սեւ ծովի հարաւ-արեւելեան անկիւնի մերձակայքում՝ Ճորոխի աւազանում, իսկ ալարոդներին նոյնացնում են ուրարտացիների հետ, գտնելով, որ վերջիններս զբաղեցրել են Վանայ լճի աւազանի արեւելեան մասը եւ Երասխի աւազանը[18]: Այս տեսակէտն այնքան է արմատացել հայագիտութեան մէջ, որ դրանից ամէն մի շեղում խիստ բացասաբար է ընկալւում ուսումնասիրողների կողմից: Սակայն մենք կը փորձենք Հերոդոտոսի եւ այլ հեղինակների

© National Library of Armenia

տուեալների հիման վրայ հերքել նման մօտեցումը եւ ընթերցողի դատին յանձնել տեղորոշման միանգամայն այլ տարբերակ:

Մատիենեներ: Սկսենք, ինչպէս Հերոդոտոսի սատրապութիւնների նկարագրութեան մէջ, մատիեններից, որոնց Պատմահայրը, այլեւայլ կապակցութեամբ, անդրադառնում է մի քանի անգամ: Հերոդոտոսը հաւաստում է, որ «մեդական տէրութեան եւ լիւդիական տէրութեան միջեւ սահմանը Հալիւս գետն էր, որ հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով՝ այնուհետեւ (հոսում է) աջից մատիեններին եւ ահեակից փռիւգիացիներին ունենալով»[19]: Ցիշատակութեան մատիենները չեն կարող որեւէ ձեւով առնչուել տասնութերորդ սատրապութեան մատիեններին, որովհետեւ բնակւում են Հալիւս կամ Հալիս գետի աւազանում: Պատմահօր մէկ այլ տեղեկութեամբ յոյն-պարսկական կռիւներին մատիենները մասնակցել են Պափլագոնացիների հետ մէկտեղ եւ «Լիգիացիների, մատիենների, մարիանդինների եւ սիրիացիների (փոքրասիական - Ց. Բ.) հանդերձանքը նոյնական էր պափլագոնականի հետ: Այս սիրիացիներին պարսիկներն անուանում են կապադովկացիներ: Պափլագոնացիներին եւ մատիեններին առաջնորդում էր Դոտոսը, Մեգասիդրոսի որդին, իսկ մարիանդիններին, լիգիացիներին եւ սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի եւ Արտիւստոնէի որդի Գոբրիւեսը»[20]: Առանձնապէս չխորանալով յիշեալ ցեղերի տեղադրութեան խնդրում՝ ստիպուած ենք խոստովանել, որ սոյն յիշատակութեան մատիենները նոյնանում են Հալիսի աւազանի մատիեններին, ուստի եւ չեն կարող կապ ունենալ տասնութերորդ սատրապութեան հետ: Խնդրիս մէջ բարդութիւն է մտցնում Հերոդոտոսի յաջորդ հաղորդումը, ըստ որի «կիլիկեցիներին յաջորդում են արմենները, որոնք նոյնպէս առատ հողեր ունեն. արմեններից յետոյ, ահա այստեղ բնակւում են մատիենները: Յաջորդը, ահա, Կիսսիա երկիրն է, որտեղ Քոասպէս գետի վրայ գտնւում է ահա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան, եւ որտեղ գտնւում են նրա գանձերը»[21]: Ստացւում է, որ մատիենները բնակեցրել են արմեններից մինչեւ Կիսսիա տարածուող երկիրը, այսինքն՝ բնակւել են Ասորեստանում: Այս տեղեկութիւնը կարծես թէ իր հաստատումն է գտնում Հերոդոտոսի այլ վկայութիւններում, որոնցից մէկի համաձայն «Գիւնդէս գետը, որը բխում է Մատիենական լեռներից, հոսում է Դարդանների երկրի միջով ու թափւում մէկ այլ՝ Տիգրիս գետը»[22]. իսկ ըստ միւսի՝ «Արմենիայից ճանապարհը մտնում է Մատիենէ, որտեղ կայ երեսուն չորս կայեան, հարիւր երեսուն յոթ փարսախի վրայ: Այս երկրի միջով հոսում են չորս նաւարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նաւով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը եւ երրորդը համանուն են, բայց նոյն գետերը չեն եւ նոյն վայրից չեն բխում. քանզի յիշեալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենէից: Չորրորդ գետը կոչւում է Գիւնդէս, որը Կիւրոսը բաժանել էր երեք հարիւր վաթսուն ջրանցքների: Այս երկիրն անցնելուց յետոյ ճանապարհը մտնում է Կիսսիյեան երկիրը, ... մինչեւ Քոասպէս գետը, որը նոյնպէս նաւարկելի է: Այս գետի վրայ է գտնւում Սուսա քաղաքը»[23]: Վերջին տեղեկութիւնը, ինչպէս ճիշտ նկատել են ուսումնասիրողները, մեզ է հասել ոչ անաղարտ վիճակում: Երկու նոյնանուն գետերի անունը, որ հետազօտողներն իրաւացիօրէն վերա-



կանգնում են «Զաբատ» եւ նոյնացնում Մեծ Զաւ ու Փոքր Զաւ գետերին, մեզ չի հասել[24]: Սակայն անկախ դրանից, տարակոյս չկայ, որ Մատիենէ երկիրը յիշեալ վկայութիւնների մէջ եւս համապատասխանում է Ասորեստանին, ուստի եթէ անգամ ընդունենք, որ Ասորեստանը կոչուել է նաեւ Մատիենէ, ապա Ասորեստանի եւ Բաբելոնի առանձին սատրապութիւն կազմելը անհնարին է դարձնում այս երկրի կամ նրա բնակիչների պատկանելիութիւնը տասնութերորդ սատրապութեանը:

Հարցիս մէջ առանձին յստակութիւն չի մտցնում նաեւ Հերոդոտոսի մէկ այլ վկայութիւնը, որը իւրովի է մեկնաբանել Ստրաբոնը: Ըստ Պատմահօր՝ Արաքս գետը սկիզբ է առնում Մատիենեան լեռներից, որտեղից հոսում է եւ Գիւնդը (Գիւնդէս), որը Կիւրոսը բաժանել է 360 ջրանցքների: Ըստ որում Արաքսը, գալարուելով, առաջացնում է 40 բազուկներ, որոնք, բացի մէկից, կորչում են ճահիճներում, որտեղ մարդիկ սնւում են հում ձկներով եւ կրում փոկամորթուց պատրաստուած հագուստներ: Արաքսի միակ գետաբերանը, ըստ հեղինակի, դուրս է գալիս Կասպից ծով[25]: Նշուած տեղեկութիւնները Ստրաբոնի մօտ ստացել են ներքոյիշեալ տեսքը. Արաքսը հոսում է մատիենների մարզից, այնուհետեւ բաժանւում է 40 բազուկների՝ բաժանելով սկիւթներին բակտրիացիներից[26]: Տեղեկութիւնների նմանօրինակ խիստ խառնափնթոր զուգակցում այնքան էլ յաճախ չի պատահում: Ելնելով Գիւնդէսի յիշատակութիւնից՝ պէտք է ենթադրել, որ նշուած տեղեկութեան մէջ Արաքսը Տիգրիսի վտակներից է, որը կարող է համապատասխանել ներկայիս Տաւուկ գետին (Աղսու վտակով), որը Գիւնդէսից (ներկայիս Դիալա գետը) հիւսիս թափւում է Տիգրիսի մէջ: Սակայն զուտ տեսականօրէն Մատիենեան լեռներից սկիզբ առնող գետը կարող էր թափուել նաեւ Կասպից ծով, եթէ ակունքները գտնուէին լեռների արեւելեան լանջերին: Այդ դէպքում Արաքսը կարող է նոյնանալ Ամարդոս կամ այժմեան Սեֆիդ-ռուդ գետին, որը ներկայումս վերին հոսանքի շրջանում կոչւում է Կըզըլ-Ուզեն: Նման ենթադրութիւնն ամրապնդւում է Սեֆիդ-ռուդի ճիւղաւորուած գետաբերանով եւ ծովին մերձակայ տարածքների ճահճուտներով: Եթէ նման ենթադրութիւնը ճիշտ է, ապա Սեֆիդ-ռուդը Ամարդոսից բացի ունեցել է նաեւ Արաքս անունը կամ էլ յոյները դրան Արաքս են անուանել: Սակայն գետի Կասպից ծով թափուելու իրողութիւնը, գետաբաղուկների մէկից բացի ճահիճներում կորչելը, որը յատուկ չէ Ամարդոսին, ինչպէս նաեւ Արաքսը սկիւթներին բակտրիացիներից բաժանող գետ դիտելը մտածել են տալիս, որ տեղեկութիւնը կարող է վերաբերել նաեւ ներկայիս Ամու-դարեայինկամ պատմական Օքսոսին, որը հնում թափւում էր Կասպից ծով: Անկախ այն հանգամանքից, թէ Արաքսի հետ կապուած տեղեկութեան մէջ գետը նոյնանում է Տաւուկին, թէ Սեֆիդ-ռուդին, Մատիենական լեռներն իրենց տեղադրութեամբ համահունչ են Հերոդոտոսի միւս տուեալներին, որոնք վերը քննեցինք, ուստի դիմենք այլ սկզբնաղբիւրների տեղեկութիւններին:

Ստրաբոնը, որն, ի տարբերութիւն Պատմահօր, Մատիենեան լեռների, գետի սկիզբը համարում էր մատիենների մարզը, Մատիենէ երկրի եւ մատիենների մասին ունի եւս մի քանի յիշատակութիւններ: Այսպէս, Հայաստանի, Մատիենէի եւ Ստորին Փռիւգիայի համատեղ յիշատակութիւնը՝ կապուած երաշտի հետ[27], պարզորոշ հաւաստում է, որ այդ դէպ-

© National Library of Armenia

քում խօսքը վերաբերում է հալիւսեան կամ հալիսեան մատիեններին: Եթէ անգամ կասկածի տակ առնենք դրա պարզորոշութիւնը, այնուամենայնիւ, նշուած կոնտեքստում այդ առաւել հաւանական եզրակացութիւնն է: Սակայն, շատ չանցած, Ստրաբոնը Մատիենէն համարում է Միդիայի երկրամաս[28], հաւաստելով կրկին անգամ այդ մասին իր աշխատութեան XI գրքում[29]: Անդրադառնալով Կասպից կամ Վրկանից ծովի շրջակայքում ապրող ժողովուրդներին՝ յոյն աշխարհագրագէտը գրում է. «Վրկաններից յետոյ ծովի շրջագծով բնակւում են ամարդները, անարիակները, կատիշները (կադուսիները), աղվանները (ալբանները), կասպերը, ուիտիները (կամ վիտիները) եւ հնաբաւոր է, ընդհուպ մինչեւ սկիւթները, այլ ժողովուրդներ: Վրկանների միւս կողմում ապրում են դերբիկները, իսկ կատիշները սահմանակցում են մարերին եւ մատիաններին Պարաքոաթրէս լեռան ստորոտին»[30]: Դիմելով ատրպատականեան Մարաստանի աշխարհագրութեանը՝ հեղինակն այն տեղադրում է Հայաստանից եւ Մատիանէից արեւելք, Մեծ Մարաստանից արեւմուտք եւ Մատիանէից ու Մեծ Մարաստանից հիւսիս, իսկ հարաւում յարակից է համարում Վրկանից ծովի խորշին մերձակայ մարզերին ու Մատիանէին[31]: Նա նաեւ վկայում է, որ Մարաստանը բարձր լեռնային ու ցուրտ երկիր է, եւ նրա լեռները Էկբատանայից, Ռագայից եւ Կասպիական դռներից ձգւում են մինչեւ Մատիանէ ու Հայաստան[32]: Եթէ անգամ ընդունենք, իսկ կասկածելու առանձին պատճառներ չկան, որ Մատիանէն Մարաստանի մասն է, ապա հեղինակի կողմից վերջինիս տեղադրութիւնը Պարաքոաթրէս լեռան ստորոտում հակասում է այլ սկզբնաղբիւրների տեղեկութիւններին: Խնդիրն այն է, որ յոյն աշխարհագրագէտի այլ տեղեկութիւնների համաձայն, Պարաքոաթրէսի տակ պէտք է հասկանալ, տուեալ դէպքում, ներկայիս Թալիշի եւ Գիլանի լեռները, ինչպէս նաեւ դրանց շարունակութիւնը, հետեւաբար կատիշները, որոնց յոյները նոյնացնում էին գելերի հետ, սահմանակցելով մատիաններին, պէտք է տեղորոշուէին մինչեւ Մատիանէ կամ Ուրմիոյ լիճը կամ էլ մատիանները պէտք է տարածուէին մինչեւ Արդաբիլի (հնում՝ Արտաւետ) եւ յարակից շրջանների տարածքը: Տեսականօրէն այդ թերեւս հնարաւոր է, սակայն նշուած դէպքում պարզապէս հակասութիւն է առաջ գալիս Ստրաբոնի կողմից ատրպատականեան Մարաստանը կամ պարզապէս Ատրպատականը Հայաստանից ու Մատիանէից արեւելք եւ Մատիանէից ու Մեծ Մարաստանից հիւսիս տեղադրելուն: Այս իրողութեանը մենք դեռ կանդրադառնանք, այժմ լոկ նշենք, որ վերջին երեք տեղեկութիւնների մէջ, թերեւս, միակ տարբերակիչ իրողութիւնն այն է, որ մի դէպքում մատիենները յիշւում են որպէս ցեղ, իսկ միւս դէպքերում խօսքը գնում է Մատիենէ երկրի մասին: Հարկ է նշել, որ Մատիենները, որպէս ցեղ, Ասորեստանի տարածքում կամ Ուրմիոյ լճի աւազանի շրջանում գրեթէ չեն յիշւում, եւ նշուած տարածքները հանդէս են գալիս որպէս Մատիենէ կամ Մատիանէ երկիր:

Ուրմիոյ լճի անունը մեզ է հասել Մարտիանէ եւ Մանտիանէ[33] գրութիւններով, որոնցում ե՛ւ «ն»-ն, ե՛ւ «ր»-ն աճական են: Մարտիաններին դեռ կ'անդրադառնամ, սակայն աւելորդ չեմ համարում նշել, որ Ուրմիոյ լիճը ամասիացի աշխարհագրագէտը յիշատակում է ոչ միայն որպէս Հայաստանի լիճ՝ կոչելով այն Մանտիանէ, այլեւ Մարաստանի կազմում՝ Σπαῦτα անունով[34], որն ուսումնասիրողներն իրաւացիօրէն սրբագրել են՝ Καπαῦτα (Կ. Միւլլեր) կամ Καπαῦταν (Կրամեր եւ ուրիշներ)[35]: Դժուար չէ տեսնել, որ հայերի կողմից լճին տրուած կամ հայերի կողմից մէկ այլ ժողովրդից փոխառնուած Կապուտան անունը պարզապէս Մանտիանէի թարգմանութիւնն է, քանի որ Ստրաբոնի հաւաստմամբ Մանտիանէն նշանակել է կապոյտ: Կապուտան անունը իր կառուցուածքով իրանական է, սակայն շատ հաւանական է, որ լճին Կապուտան անունը տուել էին հայերը՝ «կապոյտ» գոյնանունը շատ աւելի հին ժամանակներում փոխառած լինելով իրանցիներից: Այս եզրակացութիւնն ամրապնդւում է, թերեւս, այն փաստով, որ իրանախօս Ատրպատականի նկարագրութեան առիթով լճանունը յիշատակւում է ոչ թէ Կապուտան, այլ Մանտիանէ գրութեամբ: Այսպէս են ծնուել Ուրմիոյ լճի հին անունները, թէ ոչ, շատ էլ կարեւոր չէ, բայց անտարակոյս է մի բան, որ «կապոյտի» գաղափարը գալիս էր հէնց մատիեն կամ մատիան ցեղանունից:

Այժմ քննութեան առնենք Պլինիոս Աւագի եւ Կլաւդիոս Պտղոմեոսի հաղորդումները, որոնք, ըստ իս, որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում: Որոշ նկատառումներից ելնելով՝ մենք խախտում ենք ժամանակագրական յաջորդականութիւնը եւ առաջինն անդրադառնում ենք ալեքսանդրացի մեծ աշխարհագրագէտի տուեալներին, որոնք հետաքրքիր նորոյթներ են պարունակում: Պտղոմէոսի մօտ Մարտիանէ անունով հանդիպող Ուրմիոյ լիճը տեղադրւում է Կադուսիայում կամ Կատիշների երկրում[36], որ հակասութեան մէջ է Ստրաբոնի՝ Մատիենէն Կատիշների հարեւանութեամբ, Պարաքոաթրէս լեռան ստորոտում ցոյց տալուն: Աշխարհագրագէտի տեղեկութիւնների քարտէզագրումը բացայայտում է մի հետաքրքիր իրողութիւն եւս. լճի շրջակայքում զարմանալիօրէն բնակավայրեր չեն յիշատակւում: Հեղինակի մէկ այլ հաղորդմամբ՝ «Մեդիայի արեւմուտքում, Հայքին մօտ գտնուող մասում, բնակւում են կասպիացիները (իմա՛ կասպերը - Ց. Բ.), որոնցից ներքեւ գտնւում է Մարտիանէն՝ Ասորեստանի ողջ կողքի երկայնքով: Ծովամերձ շրջաններում կադուսիացիները, որոնք կոչւում են նաեւ լեգեր (իմա՛ գելեր - Ց. Բ.), եւ դրիբիկներ, որոնցից յետոյ մինչեւ երկրի խորքերը տարածւում են ամարիակները (իմա՛ անարիակները - Ց. Բ.) եւ ամարդները (կամ մարդերը): Ներսի՝ դէպի կադուսիացիների գաւառն ընկած մասերը զբաղեցնում են կարդուքները եւ Մարուանդները՝ մինչեւ Մարտիանե լիճը: Գելերից ներքեւ մարգասներն են, որոնցից յետոյ Տրոպատենէն, որը տարածւում է մինչեւ ամարիակները (իմա՛ անարիակները - Ց. Բ)»[37]:

Պտղոմէոսի երկի տուեալների մանրակրկիտ քննութիւնը ոչ միայն կապուած է մեծ ջանքերի ու ժամանակի հետ, այլեւ դուրս է մեր աշխատանքի անմիջական շահագրգռութիւնների շրջանակից, ուստի մենք կ'անդրադառնանք միայն մի քանի հարցադրումների: Նախ եւ առաջ հարկ է ընդգծել, որ Մարաստանի պտղոմէոսեան նկարագրութիւնն անհամեմատ հին է, քան նրա ապրած ժամանակաշրջանը: Մ. թ. II դարում Մարաստանն արդէն որպէս ինքնուրոյն պետութիւն գոյութիւն չունէր, իսկ եթէ գոյութիւն էլ ունենար, ապա նրա կազմում չէր գտնուի Կասպքը, որը, բոլոր սկզբնաղբիւրների համաձայն, Արտաշէս Ա-ից (189-160) սկսած՝ Մեծ Հայքի թագաւորութեան մաս էր կազմում: Ինչպէս վերը տեսանք, ամասիացի յոյն աշխարհագրա-



© National Library of Armenia

գէտը Ուրմիոյ լիճը մի դէպքում վերագրում էր Մեծ Հայքին, իսկ միւս դէպքում՝ Մարաստանին: Պտղոմէոսի մօտ եւս Ուրմիոյ լիճը հանդիպում է եւ Մեծ Հայքի եւ Մարաստանի նկարագրութեան մէջ[38]: Հասկանալի է, որ II դարում, երբ Մեծ Հայքում իշխում էին հայացած կամ հայացող Պարթեւ Արշակունիները, որոնք, Պարթեւական թագաւորութեան համակարգում երկրորդութեան իրաւունքն ունենալով, տիրում էին Ատրպատականի ձեռական իշխանութեան երկրին[39], Ուրմիոյ լճի աւազանը ոչ մի կերպ չէր կարող պատկանել Մեդիա-Մարաստանին: Ցիշեալ եզրակացութիւնն ամրապնդւում է Պտղոմէոսի երկի մէկ այլ տեղեկութեամբ եւս, ըստ որի Մարաստանի մէջ էին մտնում նաեւ կարդուքները՝ իրողութիւն, որ հնարաւոր էր Մարկոս Անտոնիոսի պարթեւական արշաւանքից յետոյ կամ էլ մեր թուականութեան արշալոյսին, երբ Հռոմը հայկական գահին էր բազմեցրել Ատրպատականի թագաւորներին: Գոնէ մեր կարծիքով՝ առաւել հաւանական ժամանակաշրջանն, այնուամենայնիւ, Անտոնիոսի Արեւելքում գտնուելու տարիներն են, երբ էլ, թերեւս, կազմուել է Մարաստանի նկարագրութիւնը: Դրա օգտին է խօսում Կարդուքների երկրի Մարաստանի մէջ գտնուելը, որով Հայաստանը զրկւում էր Պարթեւական թագաւորութեան հետ անմիջական հարեւանութիւնից եւ դրանով իսկ համագործակցելու եւ ռազմական օժանդակութիւն ստանալու հնարաւորութիւնից: Հաշուի առնելով վերն ասուածը՝ առանց կասկածի կարելի է պնդել, որ Պտղոմէոսը օգտագործել է Մարաստանի մի հին նկարագրութիւն, որը նա փորձել է յարմարեցնել այլ երկրների նկարագրութեանը եւ մուծել է աշխատութեան մէջ:

Մարաստանի նկարագրութիւնը պարունակում է նաեւ որոշ այլ անհամապատասխանութիւններ: Հեղինակը կասպերի կամ կասպիացիների հարեւանութեամբ տեղադրում է Մարտիանէն, սակայն երկու տող անց կադուսիացիների մերձակայքում տեղադրում է կարդուքներին եւ մարունդներին, որը Կասպքի եւ Մարտիանէի հարեւանութեան դէպքում պարզապէս բացառւում է: Առաւել եւս, որ հեղինակի միւս տեղեկութեամբ Մարտիանէն (նոյնական է Մատիանէին - Ց. Բ.) տարածուել է Ասորեստանի ողջ կողքի երկարութեամբ: Սրան համահունչ է Մատիենէի լիճը Կադուսիայում տեղադրելը, որով Կասպքը կտրւում է Մատիենէից, սակայն դրանով իսկ Ուրմիոյ լճի շրջանը հանւում է Մատիենէի կազմից, որը հաւանական չէ: Ինչպէս տեսնում ենք, շատ դժուար է տարածքային առումով Մարտիանէն որեւէ կերպ տեղորոշել կասպերի հարեւանութեամբ կամ էլ Պարաքոաթրէս լեռների մերձակայքում: Վերջին հանգամանքի մասին ստորեւ դեռ կը խօսուի, սակայն կարող էր նշուած Մարտիանէն կամ Մատիանէն արդեօ՞ք մաս կազմել տասնութերորդ սատրապութեան: Կարծում եմ, որ աշխարհագրական առումով այդ պարզապէս անհնար է: Աւելին՝ ծանօթութիւնը Պլինիոս Աւագի տուեալներին մեզ բերում է այն մտքին, որ Պտղոմէոսի տեղեկութիւնները մասամբ ծագում են լատին հեղինակի աշխատութիւնից կամ էլ երկուսն օգտուել են մի ընդհանուր աղբիւրից: «Բնապատմութեան» հեղինակը նշում է, որ «մարոտիաները, արսերը, գելերը, որոնց յոյներն անուանում էին կադուսիացիներ, մատիաները»[40] գտնւում էին Մարաստանի սահմաններում: Եւ, իրօք, ըստ Պլինիոսի՝ մատիանները կադուսիացիների հարեւանութեամբ են յիշւում, որոնք,



ինչպէս ասուեց, նոյնական էին գելերին: Նման տեղադրութիւնը տեսականօրէն հնարաւոր է եւ Ուրմիոյ լճի մերձակայքում եւ Պարաքոաթրէս կամ, ըստ հայկական աղբիւրների, Պատիժահար լեռան ստորոտում: Ելնելով նախորդ վկայութիւններից՝ երկրորդի հնարաւորութիւնն այնքան աննշան է, որ կամայ թէ ակամայ հարց է ծագում, թէ ինչո՞ւ այնուամենայնիւ յիշատակութիւններ են պահպանուել մատիենների Պարաքոաթրէս լեռան ստորոտում բնակուելու վերաբերեալ: Թերեւս այդ կապուած է մարոտիաների ցեղի իրական գոյութեան հետ: Պլինիոս Աւագի կողմից մարոտիաների յիշատակութիւնը, եթէ այն, իհարկէ, զուտ գրչական սխալ չէ, եւ նրանց անուան խիստ մերձակցութիւնը մատիան անուանմանը մտածել են տալիս, որ եղել է մատիենների կամ մարտիենների ազգակից մի ցեղ մարոտիաներ անուանով, որն իսկապէս զբաղեցրել է Պարաքոաթրէս լեռան մերձակայքը՝ դառնալով յոյն հեղինակների հակասական ընկալումների պատճառ:

Թւում է թէ մենք կանգնած ենք փակուղու առաջ, որովհետեւ ո՛չ հալիսեան մատիենները եւ ո՛չ էլ Ուրմիոյ լճի մերձակայքում գտնուող Մատիենէ երկիրը չէին կարող մտնել տասնութերորդ սատրապութեան մէջ: Եթէ առաջինը պարզապէս անհնար է, ապա երկրորդի տեսական հնարաւորութեան դէպքում, հաշուի առնելով ցայսօր ընդունուած սասպէյրների տեղադրութիւնը Սպերի շրջանում, Ուրմիոյ լճի շրջանից մինչեւ Սպեր ընկած ահռելի տարածքում հազիւ թէ չգտնուէին այլ ցեղախմբեր եւս, որովհետեւ, եթէ սասպէյրները, ընդամէնը Սպերը բնակեցրած ժողովուրդ լինելով, յիշւում են բազմիցս, ապա ալարոդները, որոնք պէտք է զբաղեցնէին յիշեալ ահռելի տարածքը, մոգական դաւազանով անհետանում են տարածաշրջանի էթնիկական քարտէզից: Այսուհանդերձ, մատիենների մասին հրաշքով պահպանուել է եւս մէկ հաղորդում, որն էապէս տարբերւում է նախորդներից:

Հեկատէոս Միլետացու «Երկրագրութեան» մեզ հասած ծաղկաքաղ հատուածներից մէկում, որը պահպանուել է Ստեփանոս Բիւզանդացու երկում, ասւում է, որ Մոսքերը կոլխական ցեղ են եւ հարեւան մատիեններին[41]: Այս հաղորդումից պարզ է դառնում, որ Մատիենական ցեղախմբի մի հատուածը բնակուել է Այսրկովկասում, ներկայիս Վրաստանի Հանրապետութեան հարաւ-արեւմտեան շրջաններում հաստատուած մոսխերի կամ մոսքերի հարեւանութեամբ: Այս տեղեկութեան մատիեններին չի կարելի նոյնացնել փոքրասիական մատիեններին, որովհետեւ նրանց հարեւան Մոսքերը կոլխական ցեղ են: Հասկանալի է, որ նման մօտեցման դէպքում մատիենների բնակութեան շրջանը կարելի է տեսնել եւ մոսքերից հիւսիս եւ հարաւ ու արեւելք, սակայն, ի նկատի առնելով նրանց կոլխական ժողովուրդ լինելը, առաւել հաւանականն անշուշտ նրանց Մոսքերից հիւսիս տեղադրելն է, որը ստորեւ կը փորձենք հիմնաւորել: Կայ մի հանգամանք եւս: Տասնութերորդ սատրապութեան մէջ մատիենների առաջինը յիշատակելը ենթադրում է նրանց տեղորոշումը սասպէյրներից արեւմուտք, որը վերջիններիս Սպերի շրջանում տեղադրելու դէպքում չի հաստատւում ոչ մի սկզբնաղբիւրով, կամ էլ սասպէյրներից հարաւ: Վերջին եզրակացութեանը յանգել են մի շարք ուսումնասիրողներ: Ի. Ջաւախիշուիլին մատիեններին փորձում էր տեղադրել Բասեան գաւառի մերձակայքում, սասպէյրներից արեւելք, Ս. Ջանաշիան եւ Գ.

© National Library of Armenia

Մելիքիշուիլին՝ սասպեյրներից հարաւ եւ Վանայ լճից արեւմուտք ու հիւսիս-արեւմուտք, Ի. Դեակոնովը՝ Արաքս գետի ակունքների շրջանում եւ Ն. Խազարաձէն՝ Արաքս գետի վերին հոսանքի շրջանում, սասպեյրների հարեւանութեամբ[42]: Աւելորդ է ասել, որ այս տեսակէտի կողմնակիցների հիմնական կռուանները Հերոդոտոսի կողմից Արաքսի ակունքները Մատիենների երկրում տեղորոշելն է, Հեկատէոս Միլետացու վերը բերուած տեղեկութիւնը եւ, իհարկէ, որ շատ կարեւոր է մատիենների հէնց նշուած շրջանում տեսնելու մեծ ցանկութիւնը: Արաքսի խնդիրը մենք քննարկեցինք եւ պարզ դարձաւ, որ այն ոչ մի կերպ չի նոյնանում հայկական Արաքս-Երասխին, ուստի մնում է քննարկել հարցը Հեկատէոսի տեղեկութեան լոյսով՝ ներառելով մեզ հասած բոլոր փաստերը: Հերոդոտոսը, անդրադառնալով տասնիններորդ սատրապութեանը, գրել է. «Մոսքերի, տիբարենների, մակրոնների, մոսսինոյկների եւ մարերի վրայ սահմանուեց երեք հարիւր տաղանդ (հարկ). սա տասնիններորդ նահանգն էր»[43]: Այս տեղեկութիւնը վերլուծելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Քսենոփոնի «Անաբասիս»-ի տուեալներին, որոնց համաձայն մինչեւ մակրոնները, սրանցից արեւմուտք Մոսսինոյկները, որոնց ենթակայութեան տակ էին նրանցից արեւմուտք տեղակայուող փոքրաթիւ խալիբները եւ վերջիններից էլ արեւմուտք տիբարենները[44]: Ցեղերի հերոդոտեան նկարագրութեան եւ «Անաբասիս»-ի տուեալների համադրումը մեզ թոյլ է տալիս ասելու, որ ցեղերի հերոդոտեան շարքն ունի աշխարհագրական հերթականութիւն: Մարերի հարեւանութիւնը մոսսինոյկներին մեզ իրաւունք է տալիս եզրակացնելու, որ նրանք նոյնանում են մոսսինոյկների ենթակայութեան տակ գտնուող խալիբներին[45]: Եթէ մի պահ վերանանք տիբարենների, ապա հերոդոտեան մոսքերը պէտք է տեղադրուեն ցեղերի շարքի ծայր արեւելեան հատուածում: Սակայն խնդիրն այն է, որ, Քսենոփոնի համաձայն, նշուած տարածքում գտնուում էին այսրկովկասեան խալիբները: Այս իրողութիւնը չի վրիպել ուսումնասիրողների ուշադրութիւնից: Ի. Դեակոնովը միանգամայն իրաւացիօրէն նշել է, որ կարծես թէ մոսք անուանումը խալիբ-խալդայների մէկ այլ անուանումն է, սակայն տարօրինակ ձեւով մոսքերին նոյնացնում է ոչ թէ արեւելեան, այլ արեւմտեան կամ պոնտական խալիբների հետ[46]: Իրականում, ինչպէս դժուար չէ եզրակացնել ցեղանունների շարքից, եթէ մոսք-խալիբ նոյնացումը հնարաւոր է, ապա միայն արեւելեան խալիբների դէպքում[47]: Պլինիոս Աւագը, մի կապակցութեամբ յիշելով «Պոնտոսի ամենանշանաւոր Փասիս (իմա՛ Ռիոն) գետը», գրում է, որ՝ «Այն սկիզբ է առնում մոսքերի մօտ եւ 38,5 մղոն երկայնքով մատչելի է ցանկացած մեծութեան նաւերի համար» եւ, որ «նրա գետաբերանում գտնուում է Փասիս քաղաքը»[48]: Մէկ այլ կապակցութեամբ նա նշում է, թէ «Թասիեի եւ Թրիարիեի տարածքները հասնում են մինչեւ Պարիհեդրեան լեռները, որից այն կողմ է գտնուում Կողքիսի անապատը. նրա կողքին կերաւնացիների ուղղութեամբ բնակւում են արմենոխալիբները եւ Մոսքերի տարածքն է՝ մինչեւ Կիւրոսի վտակ Հիբերոսը: Նրանցից ներքեւ սակասաններն են, այնուհետեւ՝ մակերոնները եւ Աբսարրոս գետը»[49]: Լատին պատմիչի երկու հաղորդմամբ էլ մոսքերը տեղադրւում են խալիբների զբաղեցրած տարածքում, քանի որ Փասիսն, իրօք, սկիզբ է առնում խալիբները հիւսիսից եզերող լեռներից



եւ, ամէն ինչից դատելով, խալիբ-մոսքերը տարածւում էին մինչեւ բուն Վիրքի կամ Իբերիայի սահմանը: Այսպիսով, հերոդոտեան մոսք-[տիբարեն]-մակրոն-մոսսինոյկ-մար շարքը, ըստ էութեան, համապատասխանում է «Անաբասիս»-ի խալիբ (=մոսք)-մակրոն-մոսսինոյկ-խալիբ (=մար)-տիբարեն շարքին: Միակ անհամապատասխանութիւնը տիբարեններն են, որոնք անհասկանալի պատճառով յայտնւում են մոսքերի հարեւանութեամբ: Կարելի՞ է արդեօք տալ դրա բացատրութիւնը: Թերեւս, այո:

Մոսքերին սովորաբար փորձ է արւում կապելու մուշկերի հետ, որոնք առաւել հին սկզբնաղբիւրներում նոյնական էին փոիւգիացիներին, որոնց հնդեւրոպական լեզուաընտանիքին պատկանելը ոչ ոք չի կասկածում[50]: Այս նոյնացումը, հարկ է նշել, որ շատ կասկածելի է, որովհետեւ ասորեստանեան, թէ՛ վանեան բեւեռագիր արձանագրութիւններում, խեթական դաղափարագիր, թէ՛ եբրայեցերէն տեքստերում բացակայում է «ք» կամ դրան յունական համարժէք «Χ» հնչիւնը, որով Մուշկուն տարբերւում է «Մոսք»-ից կամ Μοσχ-ից: Եւ եթէ բոլորին քաջ յայտնի է Մուշկերի բալկանեան ծագումը, ապա մինչեւ այսօր էլ կասկածների եւ հակասական մեկնաբանութիւնների տեղիք է տալիս Մոսքերի ծագումը, որոնց անունն, ըստ իս, սերտ աղերս ունի վրայցական «մեսխ»-ի հետ, սակայն ոչ մի հիմք չկայ նրանց վրացական ցեղ համարելու: Մոսքերը, ամէն ինչից դատելով, պատկանում էին իրանական ցեղախմբերից մէկին, ամենայն հաւանականութեամբ, սկիւթական աշխարհին: Արդէն Հեկատէոս Միլետացու հաղորդմամբ մոսքերը կոլխական ցեղ էին, որոնց վրացականութիւնը որեւէ ձեւով կասկածի տակ չի դրւում պատմագիտական երկերում: Սակայն անտիկ հեղինակների տեղեկութիւնների ըստ ամենայնի քննութիւնը պարզում է, որ կոլխերը կամ, որ աւելի ճիշտ է, կոլքերը, որոնց անունը հաւաքական բնոյթ ունի, նոյնպէս պատկանել են սկիւթական աշխարհին: Յովհաննէս Կարագեոզեանի վերջին ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ կուլխա կամ կոլխ (կոլք) անուանումը հնդիրանական է (հմմտ. հնդկ. կուլխա «կողք, եզր, անկիւն») եւ աղերս ունի հայերէն «կող» եւ «կողք» բառերի հետ: Անունս տրուել է Սեւ ծովի ափերին հաստատուած իրանական ցեղերին, որոնք ունեցել են այլ անուանումներ: Չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ, որ նրանց այդ անունը տուել էին արեւմտեան կամ հարաւային հարեւանները[51]: Մեզ յայտնի չէ, թէ ինչ ցեղեր էին կազմում կոլխերի միութիւնը, սակայն գոնէ մէկի անունը յստակ է: Արեւմտեան Վրաստանի տարածքում գտնուող Փասիս քաղաքի (ներկայիս Փոթիի) շրջակայքում, Քսենոփոնի մի շատ արժէքաւոր վկայութեան համաձայն՝ բնակուել են փասիանները[52]: Եթէ փասիանների անունն ընկալենք որպէս իրանական էթնանուն, իսկ շուտով դրանում կը համոզուենք, ապա «Փասիան» անուան վերջին «-ան»-ը պարզապէս իրանական յոգնակիակերտն է, որը չի հասկացուել յոյների կողմից: Հետեւաբար, ցեղանունն իրականում «Փասի» է, որի վրայ յոյները, աւելացնելով յունարէնին յատուկ «Տ» վերջաւորութիւնը, Փասիս են կոչել փասիանների քաղաքը[53]:

Փասիանները բնակուել են ոչ միայն Արեւմտեան Վրաստանում, այլեւ Հայաստանի տարածքում: Քսենոփոնի վկայութեամբ՝ 10000 յոյները Հայաստանով նահանջելիս Երասխ գետի վերին հոսանքի եւ Ուղթիս գետի ակունքների շրջանում հանդիպեցին Փասիաններին[54]: Դատելով հիւսիսկովկասեան որոշ տեղանուններից՝

© National Library of Armenia

փասիանների մի հատուածն էլ բնակուել է ներկայիս կարաչայների եւ բալկարների զբաղեցրած տարածքում: Կարաչայա-բալկարական էթնոնիմների մի խումբը կազմում են այնպիսի էթնանունները, որոնք ծանօթ չեն յիշեալ ժողովուրդներին, սակայն տարածուած են նրանց շրջապատող ժողովուրդների շրջանում: Դրանք են՝ վրացական բասիանի, մեգրելական ալանի, օսական ասիագ եւ օեսսոն, սուանական մուսաւ (յոգնակի՝ սաւիար) անունները: Ելնելով գրաւոր սկզբնաղբիւրների տուեալներից եւ էթնիկ իրականութիւնից՝ դրանց բովանդակութիւնը միշտ չէ որ համապատասխանել է արդի էթնիկ կացութեանը: Ն. Վոլկովան յաջողութեամբ ցոյց է տալիս, որ բալկարների ասիագ (իրոնական), ասսոն (դիգորական) օսական անուանումները վառ օրինակ են մինչթուրքական էթնանունները նոր էթնոսին փոխանցելու, որը յայտնւում է այդ նոյն տարածքում: Ըստ հեղինակի՝ նոյնը կարելի է տեսնել մեգրելների կողմից կարաչայներին տրուած ալանի եւ սուանների կողմից բալկարներին տրուած միսաւ էթնանունների դէպքում[55]: Բասիանի էթնոնիմը հանդիպում է վրացական XIV-XV դդ. արձանագրութիւններում: Վրացական XVII-XVIII դդ. աղբիւրները հաւաստում են Բասիանիի վարչական տարածքը Դիգորի հարեւանութեամբ: 1745 թ. "Положение мест между Черным и Каспийским морями" ռուսական ատլասի քարտէզում Բասեան ժողովուրդը տեղադրւում է Չերեկ գետի վերին հոսանքում՝ օսերի եւ լեչխումցիների հարեւանութեամբ: Այնուհետեւ այս էթնոնիմը յաճախ է յիշատակւում XIX դ. առաջին քառորդի ռուսական փաստաթղթերում, որոնց հեղինակներն օսական կամ վրացական ծագում ունեցող անձինք էին[56]:

Ելնելով վերոյիշեալից՝ դժուար չէ տեսնել Բասեան եւ Փասիան ցեղանունների նոյնութիւնը, առաւել եւս, որ Քսենոփոնի Հայաստանում յիշատակած փասիանների բնակութեան տարածքում հայկական աղբիւրներն արձանագրում են Բասեան գաւառի գոյութիւնը: Աւելին՝ անշուշտ առաջնութիւնը պէտք է տալ ոչ թէ Փասիան, այլ Բասեան հնչմանը, որը գրաւոր աղբիւրներում հանդէս է գալիս շատ աւելի ուշ ժամանակներում: Բնականաբար հարց է ծագում, թէ ինչո՞ւ յոյները պէտք է Բասեանը հնչէին Փասիան (Φασιανοί), երբ ունէին «β» հնչիւնը: Կարծում եմ, որ բացատրութիւնը մէկն է: Մ. թ. ա. V դ. ցեղանունը դեռեւս չէր վերածուել Բասեան-ի եւ հնչում էր Վասեան, որը յոյները կարող էին տառադարձել կա՛մ որպէս Φασιαν, կա՛մ Ὀὐασιαν: Գերադասութիւնը տրուել է, այնուամենայնիւ, Φασιαν-ին: «Վ»-ի հնչեղացումը եւ վերածումը «բ»-ի կատարուել է տիպիկ հնդեւրոպական օրինաչափութիւններով, որը յատուկ է ոչ միայն հայերէնին, այլեւ իրանական լեզուներին:

Պարզելով, որ փասիանները իրանական ցեղ էին[57] եւ դրանով իսկ կոլխերը՝ իրանական ցեղախումբ՝ կամայ թէ ակամայ ստիպուած ենք ընդունելու մոսքերի՝ որպէս կոլխական ցեղի իրանական լեզուաշխարհին պատկանելը, որը, կարծում ենք, իր հաստատումն է գտնում յոյն հեղինակների երկերում: Ստրաբոնի տեղեկութիւններից մէկի համաձայն, որը ծագելով Միհրդատեան պատերազմների պատմիչներից, անկասկած, մեծ հաւաստիութիւն ունի, Սեւ ծովի ափագծով բնակուող ցեղերն էին աքեցիները, այնուհետեւ զիգերը, յետոյ հենիոքները, կերկետները, մոսքերը եւ կոլքերը[58]: Ցիշեալ ցեղերի աշխարհագրական հերթականութիւնը կասկած չի թողնում, որ յիշատակութեան մոսքերը չեն նոյնանում տարածքային առումով այսրկովկասեան խալիբ-մոսքերին, չնայած բոլոր հիմքերը կան կարծելու, որ նոյն ցեղի տարբեր հատուածներն են: Գելանիկոս Միտիլենացու տեղեկութիւններն էլ աւելի են յստակեցնում մոսքերի նշուած հատուածի տեղադրութիւնը: Ըստ նրա՝ կերկետներից վերեւ բնակւում են մոսքերը եւ քերիմատները, ներքեւ՝ հենիոքները, իսկ աւելի վեր՝ կորաքսները[59]: Կորաքսների տեղադրութիւնը որոշակի է, հետեւաբար Գելանիկոսի նշած մոսքերը տեղադրւում են իրօք նրանցից հիւսիսարեւմուտք: Մոսքերին կերկետների հարեւանութեամբ տեղադրում է նաեւ Պալեթատոսը[60]: Պատմագիտութեան մէջ ընդունուած է կերկետներին նոյնացնել չերքեզների հետ, սակայն, անկախ այդ նոյնացումից, բերուած տեղեկութիւնները հաւաստում են նրանց չերքեզների տարածքում կամ մօտաւորապէս նոյն տարածքում գտնուելը: Ուստի պէտք է ենթադրել, որ ցեղերի ու ժողովուրդների մեծ շարժի ժամանակներում մոսքերի մի մասը հաստատուել է Հիւսիսային Կովկասի կողմերում, իսկ միւս հատուածը, շարժուելով հարաւ, հաստատուել է ներկայիս Վրացական հանրապետութեան հարաւ-արեւմտեան շրջանում: Մոսքերը, հետեւաբար, վրացական ցեղ չեն եղել, այլ միայն հետագայում, ինչպէս կարելի է եզրակացնել Ստրաբոնի տեղեկութիւններից, յայտնուել են Մեծ Հայքի, Վիրքի եւ Կողքիսի քաղաքական տիրապետութեան ներքոյ[61] եւ աստիճանաբար լուծուել հայկական ու վրացական էթնոսների մէջ: Աւելին՝ ամենայն հաւանականութեամբ, սկզբում մոսքերը պէտք է գտնուէին որպէս անկախ քաղաքական միաւոր Վիրքի եւ Հայքի միջեւ, եւ վրացիներն իրենցից հարաւ գտնուող ժողովրդի անունը պէտք է տեղափոխէին հայերի վրայ, երբ վերջինները տիրացան մոսքերի երկրին Արտաշէս Ա-ի օրերում: Գոնէ մեր կարծիքով՝ վրացիների կողմից հայերին տրուած սոմեխի էթնանունը կարող էր ծագել մոսք կամ մոսխ անունից եւ ոչ թէ Սուխմու երկրանունից, ինչպէս այսօր ընդունուած է պատմագիտութեան մէջ[62]:



Հարց է ծագում, իսկ յիշեալ կոլխական մոսք ցեղախումբը աղերս ունի մուշքփռիւգիացիների հետ, թէ՞ ոչ: Վերջիններս Փոքր Ասիա ներխուժեցին եւ հաստատուեցին մ. թ. ա. XIII-XII դդ. եւ, եթէ մոսքերը բնակուել են տիբարենների հարեւանութեամբ, ապա նրանք կարծես թէ պէտք է նոյնանային մուշքերի հետ: Նման նոյնացման առաջին մերժումը պէտք է կապել նրանց էթնիկ պատկանելիութեան հետ, քանի որ մոսքերը կոլխական ցեղ էին կամ ժողովուրդ, իսկ մուշքերը մաս էին կազմում թրակա-փռիւգիական ընդհանրութեան: Փռիւգիացիները հաստատւում են Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններում՝ տարածուելով մինչեւ Հալիս գետը եւ, դատելով մի շարք տուեալներից, մասամբ անցնում են այն եւ բնակեցնում Կապադովկիայի արեւմտեան շրջանները: Այս առումով հետաքրքիր է Ցովսէպոս Փլաւիոսի մի տեղեկութիւնը, ըստ որի՝ «Եւ մեսքենները, որոնք հաստատուել են Մեսքեսի կողմից եւ այժմ կոչւում են կապադովկիացիներ, սակայն նրանց հնագոյն անուանման ապացոյցը բացայայտ է, որովհետեւ նրանց մօտ կայ մի քաղաք, որ մինչեւ հիմա էլ կոչւում է Մազակա եւ հակացողներին թելադրում է ենթադրելու, որ այսպէս է կոչուել ամբողջ ազգը»[63]: Մեսքեններին կապադովկիացիներին նոյնացնելու հանգամանքը ծանօթ էր նաեւ այլ հեղինակների: Այսպէս՝ Եւստաթէոս Անտիոքացի արքեպիսկոպոսը նշում է, որ Օսոքը (անշուշտ Մոսոք) մեսքենների նախահայրն էր,

© National Library of Armenia

որոնք իր ժամանակներում կոչւում էին կապադովկիացիներ, իսկ Թեոդորիտոս եպիսկոպոս Կիրացին հաւաստում է, որ Մոսոքը կապադովկիացիների նախահայրն էր[64]:

Կարծում եմ, որ այս տեղեկութիւնները համահունչ են նաեւ հայոց Պատմահօր հաղորդումներին: Ըստ Մովսէս Խորենացու՝ հայոց Արամ (իմա՛ Արամանի) գահակալը դէպի Արեւմուտք կատարած արշաւանքի ժամանակ պարտութեան է մատնում Պայապիս Քաաղեայ Տիտանեանին, որը թերեւս նոյնանում է լիւդիական թագաւոր Արդիսի որդուն՝ Սադեատին[65], եւ գրաւեալ հողերում «իւր թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ եւ բիւր մի ի զօրացն ի վերայ աշխարհին՝ եւ ինքն դառնայ ի Հայս:

Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս եւ զլեզուս հայկական, վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուանեն Ցոյնք զկղիմայն զայն Պոոտին Արմենիաձ, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչեւ յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա»[66]:

Ըստ իս՝ միանգամայն իրաւացի են Ս. Երեմեանը եւ այլ ուսումնասիրողներ, ովքեր Արամի կողմնապետ Մշակի անուան մէջ տեսնում են Փռիւգ-միւսիացիների Մուշք ցեղանունը՝ հին հայկական ձեւով[67], սակայն այնուամենայնիւ կան իրողութիւններ, որոնք անհրաժեշտ բացատրութեան կարիք ունեն: Դատելով այն հանգամանքից, որ Մուշքու-ի հիմքում ընկած է «մուշ»-ը, որից կարող էր ծագել նաեւ հայկական Մուշ քաղաքի անունը[68]՝ կարելի է ենթադրել, որ մշակ նշանակել է պարզապէս «մուշ» ցեղին պատկանող մարդ: Ինչ վերաբերում է «-քու» վերջաւորութեանը, ապա չի բացառւում, որ այն հայկական հոգնակիակերտ «-ք»-ն է, որը, հայերի միջոցով անցնելով ասորեստանցիներին եւ յարմարեցուելով ասուրերէնին, ստացել է «-քու» տեսքը:

Հր. Աճառեանը, անդրադառնալով «մշակ» բառի ստուգաբանութեանը, նշել է, որ այն նշանակում է «հողագործ, երկրագործ, այգու աշխատաւոր» եւ փոխառնուել է կովկասեան լեզուներից: Նա այն համեմատում է վրացերէն «մուշա» եւ «մուշակի» բառերի հետ, որ նշանակում է «գործաւոր», «մուշառբա» եւ «մուշակոբա» բառերի հետ, որ թարգմանւում են «աշխատանք», «մուշոբա»-ին, որ ունի «ստրկութիւն, գերութիւն» իմաստը, ինչպէս նաեւ լազ. muša (բեռնակիր), ինգուշերէն՝ mušaabay, մենգր.՝ vimušuat, mušeoba, սուաներէն՝ limšav, limšae (աշխատիլ, աշխատանք) եւ այլ բառերի հետ: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ յիշեալ բառը հանդիպում է ե՛ւ հիւսիսային, ե՛ւ հարաւային կովկասեան լեզուներում, ինչպէս նաեւ այն իրողութիւնը, որ հայերէնը կարող է բացատրուել «-ակ» մասնիկով, սակայն «մշ-» արմատը հայերէնում գոյութիւն չունի եւ գտնւում է մուշ, միշ, մշ ձեւերով կովկասեան զանազան լեզուների մէջ ու ունի առաւել ընդհանուր իմաստ, մինչդեռ հայերէնի մէջ «երկրագործ» նոյն գաղափարի մի մասնաւոր առումն է միայն՝ Հր. Աճառեանը գտնում է, որ բառը կովկասեաններից է անցել հայերէնին եւ ոչ թէ հակառակը[69]: Առաջին հայեացքից, այս տեսակէտը կասկածներ չի յարուցում, սակայն պարզւում է, որ մշակ բառի իմաստները հայերէնում իրականում աւելի շատ են: Գ. Սարգսեանը միանգամայն հիմնաւոր ցոյց է տուել, որ «մշակ» նշանակել է



ստրուկ կամ ստրկականիձ մօտ սոցիալական խաւի ներկայացուցիչ, ինչը իր հաստատումն է գտնում վրացերէն մուշոբա բառի մէջ[70]: Ամէն ինչից դատելով՝ «մշակ»-ը սկզբնապէս արտասանուել է մուշակ, որը պահպանուել է անփոփոխ ձեւով վրացերէնում, իսկ հայերէնում «ու»-ի անկումը կատարուել է շեշտակրոյս լինելու հետեւանքով: Կեսարիայի տեղում հնում կառուցուած քաղաքը սկզբում կոչուել է Մուշակք, որը ու>ա անցումից յետոյ վերածուելու էր Մաշակք-ի եւ յունարէնում ստանալու էր I aζaκa արտասանութիւնը, որում -a-ն հայերէն «ք»-ին համարժէք յոգնակիակերտ մասնիկն է: «Կք»-ի արտասանութեան դժուարութիւնը յանգեցրել է «կ»-ի անկմանը, որի հետեւանքով Պատմահօր երկում քաղաքանունը պահպանուել է Մաժաք գրութեամբ:

Արդ, կարո՞ղ էին արդեօք յիշեալ մուշքուները կամ մեսքենները սահմանակից լինել տիբարեններին, ինչպէս այսօր ընդունուած է պատմագիտութեան մէջ: Կարծում եմ, որ սկզբնաղբիւրները նման տեղադրութիւնը չեն հաստատում: Թիւրիմացութիւնը գալիս է Հերոդոտոսի երկի տուեալները ճիշտ չ'ընկալելուց: Անդրադառնալով յոյն-պարսկական կռիւների կապակցութեամբ պատերազմի մասնակիցներին՝ նա նշել է, թէ՝ «Մոսքերն իրենց գլխին ունէին փայտէ սաղաւարտներ. նրանք կրում էին վահաններ եւ երկար ծայրերով փոքր նիզակներ: Տիբարենները եւ մակրոնները եւ մոսսինոյկները արշաւում էին զինուած մոսքերի նման: Նրանց առաջնորդներն էին հետեւեալները. մոսքերի եւ տիբարենների՝ Արիոմարդոսը, Դարեհի եւ Պարմիւսի, Կիւրոսի Սմերդիս որդու դստեր, որդին, մակրոնների եւ մոսսինոյկների՝ Քերասմիսի որդի Արտաիւկտեսը, որը հելլեսպոնտոսեան Սեստոսի կառավարիչն էր»[71]: Մեզ անյայտ պատճառներով, պարսից արքունիքը յարմար է գտել տիբարեններին եւ մոսքերին պատերազմի դուրս բերել միասնական հրամանատարութեան ներքոյ, չնայած աշխարհագրականօրէն նրանք սահմանակից չէին: Ցամենայն դէպս Հերոդոտոսը, յիշատակելով Հալիսի աւազանի ցեղերին, յիշատակում է միայն մատիենեներին, փռիւգիացիներին, կապադովկեան սիրիացիներին եւ պափլագոնացիներին[72]: Քսենոփոնը տիբարեններին սահմանակից էր համարում մոսսինոյկների ենթակայութեան տակ գտնուող խալիւբներին[73], իսկ նրան հետեւող Ստեփանոս Բիւզանդացին նշում էր, որ Տիբարենիան Պոնտոսի երկրներից է, որը յարում է խալիւբներին եւ մոսսինոյկներին[74]: Քսենոփոնի համաձայն՝ Տիբարենների երկրին յաջորդել էր Պափլագոնիան[75]: Հալիսի աւազանի հերոդոտեան նկարագրութեան եւ Քսենոփոնի տուեալների համեմատութիւնը պարզում է, որ պափլագոնացիները տիրել էին լեւկոսիրիացիների տարածքին եւ անմիջական հարեւանութեան մէջ յայտնուել տիբարենների հետ[76]:

Ինչպէս դժուար չէր համոզուել, տիբարենների անմիջական հարեւանութեամբ մոսքեր չեն եղել: Նրանք գտնուել են խալիւբ-մարերի եւ սպիտակ ասորիների կամ լեւկո-սիրիացիների միջեւ: Մոսքերը, որ նոյնական են խալիւբներին, զբաղեցրել են Ճորոխ գետից մինչեւ Կուր ընկած հողերը, որոնց հարաւային սահմանագիծն էլ պէտք է համապատասխանէր XIII եւ XIX սատրապութիւնների նշուած հատուածին: Ուստի բաց է մնում լոկ այն խնդիրը, թէ մատիենեներին պէտք է փնտրել մոսքերից հիւսիս, թէ՞ հարաւ: Հարցիս պատասխանը տալիս է Քսենոփոնը, ըստ որի Հայկական սատրապութեան արեւմտեան հատուածի հիւպարքոս Տիրի-

© National Library of Armenia

բազոսի ենթակայութեան տակ էին փասիանները եւ հեսպերիտները, իսկ ազդեցութեան տակ էին տաոխները, որոնք որպէս վարձկաններ ծառայում էին նրա բանակում[77]: Ճիշտ է, հեղինակի հաւաստմամբ, Տիրիբազոսը վարձկաններ էր հաւաքագրել նաեւ խալիբներից[78], սակայն դրանց տակ պէտք է հասկանալ, ըստ երեւոյթին, սկիւթներին, որոնք կառաւարւում էին իրենց գրեթէ անկախ թագաւորի կողմից:

Ստացւում է մի հետաքրքիր պատկեր: Եթէ փասիանները գտնւում են տասներեքերորդ սատրապութեան մէջ, ապա ծիծաղելի է նրանցից հարաւ մատիենները փնտրելը: Աւելին՝ եթէ անգամ ընդունենք, որ մատիենները, իրօք, բնակուել են հայկական Արաքս-Երասխի վերին հոսանքի շրջանում, որը սկզբնաղբիւրներով չի հաստատւում, ապա չպէտք է մոռանալ, որ Երասխի ակունքը հնում ոչ թէ Բիւրակնեան լեռներից կամ Սերմանցից սկիզբ առնող գետն էր, այլ Բասենի դաշտով հոսողը[79], հետեւաբար ստացւում է, որ փասիանների երկիրը նոյնանում է մատիենների երկրին, որը ոչ մի հիմք չունի: Փասիանների երկիրը տասներեքերորդ սատրապութեան մէջ գտնուելու դէպքում բացառւում է նաեւ Սպերի երկրամասի տասնութերորդ սատրապութեանը պատկանելը, քանի որ նրանց երկիրը, որ Քսենոփոնին յայտնի է նաեւ Հեսպերիտիս անունով, նոյնպէս ենթակայ էր Տիրիբազոսին[80]: Այս հանգամանքը ոչ միայն մերժում է սասպեյրներին Սպերի տարածքում տեսնելը, այլեւ մեզ իրաւունք է տալիս Մատիենէն տեղադրելու Մոսքերից հիւսիս: Վերջիններիս զբաղեցրած տարածքը ճշգրտելուց առաջ փորձենք տեղադրել սասպեյրներին եւ ալարոդներին:

Սասպեյրներ: Ինչպէս արդէն վերը նշեցինք, Պատմահայր Հերոդոտոսը սասպեյրներին յիշատակում է տասնութերորդ սատրապութեան բնակիչների թւում: Մէկ այլ կապակցութեամբ նա նրանց յիշում է մեդացիների եւ կոլքերի հարեւանութեամբ[81], իսկ անդրադառնալով Հարաւային կամ Կարմիր ծովից (իմա՛ Պարսից ծոց եւ Էրիտրեան կամ Արաբական ծով) մինչեւ Հիւսիսային կամ Սեւ ծովը թափուող Փասիս գետը բնակուող ժողովուրդներին, նա գրում է. «Նրանցից (պարսիկներից - Ց. Բ.) դէպի հիւսիս բնակւում են մեդացիները. մեդացիներից (վերեւ)՝ սասպեյրները, սասպեյրներից (վերեւ)՝ կոլքերը՝ տարածուելով մինչեւ Հիւսիսային ծովը, որտեղ թափւում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակւում մէկ ծովից միւսն (ընկած երկրում)»[82]: Հերոդոտոսը սասպեյրներին անդրադառնում է եւս երկու անգամ: Նա նշում է, որ «Մեյոտիս լճից մինչեւ Փասիս գետը եւ կոլխերի երկիրը երեսուն օրուա ճանապարհ է անխոնջ ուղեւորի համար: Կոլքիսից Մեդիա աւելին չէ ճանապարհը, բայց նրանց միջեւ բնակւում է մի ազգ սասպեյրները. սրանց միջով անցնելուց յետոյ կարելի է հասնել Մեդիա»[83]: Դժուար չէ տեսնել, որ սա յար եւ հարազատ է նախորդ տեղեկութիւններին: Իսկ վերջին տեղեկութիւնը, որը հաւաստում է յոյն-պարսկական պատերազմի ժամանակ ալարոդների եւ սասպեյրների կոլխերի նման զինուած լինելը եւ Սիրոմիտրեսի որդի Մասիստրոսին առաջնորդ ունենալը[84], անուղղակի վկայութիւն է երկուսի՝ տասնութերորդ սատրապութեան բնակչութեան մաս կազմելու: Ցիշեալ տուեալները ցոյց են տալիս, որ սասպեյրները զբաղեցրել են ահռելի տարածք՝ կոլքերից մինչեւ մեդացիներն ընկած հողերը, ուստի միամտութիւն է նրանց Սպերի փոքրիկ շրջանում տեղադրելը: Աւելին՝ ինչքան էլ փորձենք



Մեդիան տեսնել շատ աւելի ձգուած դէպի արեւմուտք, այնուամենայնիւ ստիպուած ենք նրանց տեղորոշել կոլքերից արեւելք եւ մարերից արեւմուտք կամ հիւսիս-արեւմուտք: Այդ դէպքում ստիպուած ենք ընդունել, որ սասպեյրները պէտք է զբաղեցնէին առնուազն Արեւելեան Վրաստանի տարածքը, իսկ մար-մեդացիներին իրօք իրենց տարածքներում տեսնելու դէպքում՝ նաեւ հետագայ Աղուանքի կամ Կուրի ձախափնեակի շրջանը: Բնականաբար հարց է ծագում, թէ ինչպէս այդպիսի մեծ տարածք բնակեցրած ժողովուրդը կամ ցեղախումբը յանկարծ անհետանում է պատմութեան թատերաբեմից:

Հարցը պարզաբանելու համար դիմենք այլ վկայութիւնների քննութեանը: Ապոլլոնիոս Հռոդոսցու տուեալներով, որը մ. թ. ա. III դարի պատմագիր է, Արգոնաւորդների արշաւի հետ կապուած Փինէոսը նշում է, թէ վիզիրներից վերեւ ապրում են մակրոնները, իսկ նրանցից այն կողմ բեխիրների բազմամարդ ցեղը եւ անմիջապէս նրանցից այն կողմ սասպեյրները եւ միայն նրանցից յետոյ ռազմաշունչ կոլքերը[85]: Կարծում եմ, որ առանձնապէս մեծ տրամաբանութիւն չի պահանջւում եզրակացնելու, որ յիշատակութեան սասպեյրները նոյնական են սասպեյրներին եւ սահմանակից են կոլքերին: Ապոլլոնիոսը եւս մէկ անգամ մակրոնների հարեւանութեամբ յիշում է բեխիրներին, այնուհետեւ հպարտ սասպեյրներին ու նրանցից այն կողմ բիզերներին[86]: Շատ հետաքրքիր է Ապոլլոնիոսի «Արգոնաւորդների արշաւը» սքոլիայի այն տեղեկութիւնը, թէ բեխիրները սկիւթական ժողովուրդ են եւ նրանցից յետոյ սասպեյրներն են, մի սկիւթական ժողովուրդ, որն իրը իր անունը ստացել է նրանց մօտ առատութեամբ հանդիպող «սասպեյրին» քարի անուանումից[87]: «Արգոնաւորդների արշաւը» գրքի հեղինակ Կեղծ-Օրփեոսը բիզերների հարեւանութեամբ յիշատակում է սասպեյրների խիտ բնակեցուած քաղաքները[88], իսկ Ստեփանոս Բիւզանդացին նրանց համարում է Պոնտական տարածաշրջանի ժողովուրդ, որի անունը աւելի ուշ արտասանուել է սաբիր[89]:

Ընդհանրացնող հայեացք նետելով բերուած տեղեկութիւններին՝ ստիպուած ենք եզրակացնելու, որ սասպեյրները սկիւթական ժողովուրդ են կամ ցեղախումբ, որը պէտք է եւ զինուած էր մէկ այլ սկիւթական ցեղախմբի՝ կոլքերի նմանութեամբ: Սասպեյրները սահմանակցել են մար-մեդացիներին, հետեւաբար նրանք զբաղեցրել են Կովկասեան լեռներից հարաւ ընկած հողերը՝ ներառեալ Արեւելեան Վրաստանի կամ Վիրքի տարածքը եւ Աղուանքը կամ Կուրի ձախափնեակը: Չի բացառւում, որ նրանք մասամբ հաստատուած են եղել նաեւ Կուրի աջափնեակում, սակայն, դատելով վարչական միաւորներ ստեղծելու օրինաչափութիւններից, նրանց հարաւային սահմանագիծը պարսիկները համարել են Կուր գետը:

Սասպեյրների անունը, որ Ապոլլոնիոսի «Արգոնաւորդների արշաւ»-ի սքոլիայի հեղինակը կապում էր «սասպեյրին» քարի անուանման հետ, ըստ երեւոյթին, պատահական նմանութեան արդիւնք է: Կարծում եմ, որ անունս ծագում է սկիւթա-ալանական աշխարհին պատկանող աս ցեղախմբի անուանումից, որի մի մասը մեզ անյայտ պատճառներով կրել է սասպեյր անունը[90]: Ասպեյրների մի մասը հաստատւում է Մեծ Հայքի Սպեր գաւառում, իսկ աս ցեղի մի հատուածը՝ Ասեաց փոր կամ Արսեաց փոր գաւառում[91]: Շատ հետաքրքիր է այն փաստը, որ Պլինիոս Աւագը Ասեաց փոր գաւառի տարածքում, գուցէ եւ շրջակայքում յի-

© National Library of Armenia

շատակում է Sacasani ցեղը, որի անունը, ըստ իս, պէտք է բացատրուի որպէս սաս սակեր կամ սկիւթներ[92]: Ինչ վերաբերում է Սպերին, ապա այն պահպանել է ասպեյր ցեղանունը: Հասկանալի է, որ ասպեյրներ էին նաեւ սասպեյրները, որոնք Հերոդոտեան ժամանակներում հեռացել էին իրենց սպերեան ազգակիցներից եւ բռնել աստիճանական վրացականացման ուղին: Սասպեյր անուանման հանդէս գալը հէնց այդ երեւոյթի արտայայտութիւնն էր, երբ արդէն վրացերէնին յատուկ սկզբունքով ասպեյրների հաւաքականութիւնը ստանում էր սասպեյր կամ սասպեյր տեսքը: Ի. Մ. Դեակոնովը գտնում է, որ ասպեյրները որոշակիօրէն նոյնանում են արեւելեան վրացիներին, սասպեյրներին համարում է վրացական ցեղ[93], սակայն սասպեյրները սկիւթներ են, որոնք պէտք է տարալուծուէին Արեւելեան Վրաստանի քարտական բնակչութեան մէջ: Վրացիներին հարեւանների կողմից տրուած իբեր, իվեր եւ վրացի էթնանունները, ինչպէս նաեւ Քարթլիի Իվերիա եւ Վիրք անունները ծագում են ասպեյր ցեղանունից, սակայն ոչ թէ Ճորոխի աւազանում հաստատուած ասպեյրական ցեղերն են եղել դրա կրողները[94], այլ Վիրքի տարածքում բնակութիւն հաստատածները: Արդէն այն հանգամանքը, որ ասպեյր անունը Սպերում գործնականում փոփոխութիւն չի կրում, հաւաստում է, որ նշուած գործընթացները ընթացել են Արեւելեան Վրաստանի կամ Վիրքի տարածքում: Ինչպէս վրացիների համար հայերը սոմեխի էին մոսքերի հետ կապուած, այնպէս էլ հայերի համար վրացիները իբեր-իվեր-վիր էին, քանի որ սասպեյրական ցեղերը բնակւում էին նրանց սահմանակցութեամբ:

Հասկանալի է, որ արեւմտեան հեղինակները յիշեալ ցեղախումբը սասպեյրներ էին կոչում նրանց արեւմտեան հատուածի անունով, որովհետեւ տարածաշրջանի էթնիկ պատմութիւնը չի հաւաստում վրացական տարրի այդօրինակ տարածումը: Սասպեյր անունը հաւաքական անուանում էր եւ այդ ցեղախմբի մէջ բազմաթիւ ցեղեր եւ անգամ ցեղային փոքր խմբեր էին գտնւում: Ամէն ինչից դատելով՝ դրանց թւում էին մատիենները եւ ալարոդները:

Ալարոդներ: Ի տարբերութիւն սասպեյրների, ալարոդները յիշատակւում են ընդամէնը երկու անգամ եւ այն էլ միայն Հերոդոտոսի կողմից: Նորից մէջբերել դրանք, անդրադառնալով այդ տեղեկութիւններին, որոնք արդէն մէջ են բերուել, իմաստ չունի: Լոկ նշենք, որ նրանք սասպեյրների եւ մատիենների հետ բնակւում էին տասնութերորդ սատրապութեան մէջ եւ յոյն-պարսկական պատերազմների ժամանակ զինուած էին, ինչպէս եւ սասպեյրները կոլքերի նմանութեամբ: Թերեւս, դժուար է գտնել պատմագիտական որեւէ մի երկ, որտեղ ալարոդները չնոյնացուեն ուրարտացիների հետ, սակայն այդ նոյնացումը ոչ տրամաբանական է եւ ոչ էլ հիմնաւորուած: Ալարոդների մասին, թէկուզեւ կցկտուր, տեղեկութիւններից կարելի է միայն ու միայն ենթադրել, որ նրանք եւս պատկանում էին սկիւթական աշխարհին: Դեռ որեւէ մէկը փորձ չի արել ուրարտացիներին վերագրելու իրանական ծագում, որով եւ ուրարտացի-ալարոդ նոյնացումը բացառւում է, սակայն ալարոդները չեն կարող նաեւ վրացական ակունքներ ունենալ. քանի որ բառի մէջ երկու «ր» լինելու դէպքում «լ»-ի է վերածւում ոչ թէ առաջինը, այլ՝ երկրորդը: Ալարոդների դէպքում մենք տեսնում ենք դրա հակառակ պատկերը:

Աքեմենեան Պարսկաստանի հիւսիսային սահմանը, Հերոդոտոսի հաւաստմամբ, անցնում էր Կովկասեան լեռնաշղթայով. «Նոյնիսկ կոլքերը եւ հարեւանները՝ մինչեւ Կովկաս լեռը (լեռնաշղթան - Յ. Բ.), քանզի մինչեւ այդ լեռը տիրում են պարսիկները, իսկ Կովկասից հիւսիս (ընկած երկիրը) հաշուի չի առնում պարսիկներին, նոյնպէս հարկ տալիս են ընծաներ մատուցելու ձեւով»[95]: Ստացւում է հետաքրքիր կացութիւն: Մի կողմից՝ կարծես թէ կասկած չկայ, որ Աքեմենեան Պարսկաստանի սահմանը հասել է մինչեւ Մեծ Կովկասի լեռնաշղթան, իսկ միւս կողմից՝ զարմանալիօրէն Կուրից հիւսիս ընկած երկիրը, թւում է, չի մտնում ոչ մի սատրապութեան մէջ: Անշուշտ, կարելի է ենթադրել, որ Պարսից տէրութեան սահմանն անցել է Կուր գետով, որը բաւականաչափ ամուր պատնէշ էր հիւսիսային կովկասեան քոչուորների դիմաց, սակայն, այնուամենայնիւ, այն անհամեմատ աւելի խոցելի պատուար էր, քան Կովկասեան լեռնաշղթան, ուստի միանգամայն տրամաբանական պէտք է համարել այն միտքը, որ Աքեմենեան տէրութիւնն իր սահմանները հասցրել է մինչեւ Կովկասի լեռները: Այդ դէպքում պէտք է պատասխան տալ այն հարցին, թէ ովքե՞ր են բնակեցրել Կովկասեան լեռնաշղթայի եւ Կուրի միջեւ ընկած տարածքը:

Այս հարցին անդրադառնալուց առաջ քննարկենք մի շատ կարեւոր հարց՝ կապուած տասնմէկերորդ եւ տասնհինգերորդ սատրապութիւնների տեղադրութեան հետ, որը լոյս է սփռում, իրօք, նշուած կնճռոտ հարցերի վրա: Առաջինի մասին Հերոդոտոսը գրում է. «Կասպերը, պաւսիկները, պանտիմաթները եւ դարեյտները մէկ նահանգ կազմած վճարում էին երկու հարիւր տաղանդ: Սա էլ տասնմէկերորդ նահանգն էր»[96]: Իսկ երկրորդն



ունի հետեւեալ նկարագրութիւնը. «Սակերը եւ կասպերը վճարում էին երկու հարիւր յիսուն տաղանդ. սա տասնհինգերորդ նահանգն էր»[97]: Հարկ է նշել, որ սրանց տեղադրութեան մասին միասնական կարծիք գոյութիւն չունի: Մասնաւորապէս՝ որոշ հետազօտողներ փորձում են տասնհինգերորդ սատրապութիւնը տեղորոշել Այսրկովկասում՝ փորձելով սակերին տեղադրել Սակասենէի տարածքում, այսինքն՝ Գանձակ, ներկայիս Գեանջա քաղաքի շրջակայքում[98]: Սակայն պատմաբանների մեծ մասը իրաւացիօրէն ընդունում է, որ տեղեկութիւնը վերաբերում է միջինասիական սակերին, որոնք նոյնանում են բեհիսթունեան արձանագրութեան Saka երկրին[99]: Հասկանալի է, որ նման բացատրութեան դէպքում տասնհինգերորդ սատրապութիւնը կը յայտնուի Կասպից ծովից արեւելք ընկած հատուածում:

Թերեւս կարիք չկայ ընդգծելու, որ տասնմեկերորդ սատրապութեան կասպերը չեն նոյնանում տասնհինգերորդ սատրապութեան կասպերին: Եւ եթէ նրանք յիշատակւում են տարբեր սատրապութիւններում, ապա այդ իրողութիւնը պէտք է բացատրել նրանց երկու հատուածների բնակութեան իրար չսահմանակցող տարածքների առկայութեամբ եւ, իհարկէ, նշանակալից բազմամարդութեամբ, որի շնորհիւ տեղ են գտնել երկու սատրապութիւնների նկարագրութեան մէջ: Զխորանալով հարցիս մանրամասների մէջ՝ նշենք, որ ուսումնասիրողներն, ըստ մեծի մասին (Շթայն Հ., Հերման Ա., Դեակոնով Ի. Մ., "История Дагестана" գրքի հեղինակները, Կուզմինա Ե. Ե., Հերցֆելդ Ե. եւ ուրիշներ), տեղադրել են կասպերին Ատրպատականեան Մարաստանից հիւսիս-արեւելք, Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափերին, Ապշերոնի թերակղզուց

© National Library of Armenia

դէպի հարաւ[100]: Ըստ որում, այս կարծիքն առաջին հայեացքից անթերի է, որովհետեւ Ստրաբոնը, Կղաւդիոս Պտղոմէոսը եւ մի շարք այլ հեղինակներ Կասպից ծովի յիշեալ հատուածում, իրօք, տեղադրում են կասպերին: Ասենք, որ դրան չեն հակասում նաեւ հայկական աղբիւրների տեղեկութիւնները, որոնք նոյնպէս կասպերին տեղորոշում են Մեծ Հայքի եւ Աղուանքի Կասպից ծովին առափնեայ երկրամասերում: Այս տեղեկութիւններին մենք, անշուշտ, դեռ կանդրադառնանք, որովհետեւ դրանք լուրջ վերլուծութիւն են պահանջում, այժմ լոկ արձանագրենք, որ Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափագծին վերոյիշեալ հեղինակները տեղադրում են տասնմէկերորդ սատրապութեան կասպերին:

Տասնհինգերորդ սատրապութեան կասպերը, ուսումնասիրողների մի մասի տեսակէտով, բնակեցրել են Հինդուքուշից հարաւ (Քաֆիրիստան-Նուրիստան եւ Զիթրալ) ընկած շրջանը[101]: Ու. Հաուն եւ Ջ. Ուելսը հակուած են նրանց տեսնելու Քաշմիրում[102], չնայած վստահ չեն տեղադրութեան խնդրում: Ի. Մ. Դեակոնովը, ելնելով այն հանգամանքից, որ Քսերքսեսի բանակում կռուող կասպերի հագուստը եւ զէնքը նման էին մ. թ. ա. I հազարամեակի մանգացիների եւ մարերի հանդերձանքին եւ զէնք ու զրահին, նրանց համարում է այսրկովկասեան ցեղ[103]: Ինչ վերաբերում է տասնհինգերորդ սատրապութեան կասպերին, ապա Ի. Մ. Դեակոնովը նրանց տեսնում է Կասպից ծովից արեւելք՝ մերձկասպեան սակերի հարեւանութեամբ[104]: Սակայն հեղինակը չի բացառում նաեւ տասնհինգերորդ սատրապութեան կասպերի տեղորոշումը Այսրկովկասում: Ստրուվէն յիշեալ սատրապութիւնը փորձում է տեղորոշել Արալի ծովից արեւելք՝ դիտարկելով վերջինս որպէս Կասպից ծովի շարունակութիւն[105]: Նա գտնում էր, որ կասպերը նոյնանում են սակերին, որոնք բնակւում էին Սոգդից այն կողմ եւ Դարեհ Ա-ի օրոք կազմել էին ծովից այն կողմ գտնուող Սակերի յատուկ շրջանը: Ըստ հեղինակի՝ յոյն հեղինակները Արալեան ծովից արեւելք բնակուող սակերին կոչում էին մասագետներ եւ դահեր, որոնցից ծովափնեայ շրջանում գտնուողները կոչուել են Կասպեր[106]:

Ինչպէս տեսնում ենք, կարծիքների եւ տեսակէտների պակաս չի զգացւում, սակայն հարցը մնում է մութ եւ անհասկանալի: Մի դէպքում, փաստօրէն, երկու կասպերն էլ յայտնւում են Այսրկովկասում, միւս դէպքում՝ Միջին Ասիայի կողմերում: Վերջապէս, շատ էական է մնում այն հանգամանքը, որ Մարաստանի անմիջական սահմանակցութիւնը սասպեյրներին, իրողութիւն, որ հաւաստում է Հերոդոտոսը, դառնում է ոչ միայն կասկածելի, այլեւ անհնարին: Ելնելով նշուած հակասական տեսակէտների առկայութիւնից, որոնք, ըստ իս, լոկ խճճում են խնդիրը՝ կամենում եմ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել Ու. Հաուի եւ Ջ. Ուելսի այն ենթադրութեան վրայ, որ սատրապութիւնների ցուցակում կասպիացիների մարզը փոխարինում է Հիւրկանիային կամ Վրկանին[107]: Հարկ է նշել, որ այս իրողութիւնը շարժել է մի շարք հետազօտողների զարմանքը[108]:

Հերոդոտոսի «Պատմութիւնն», անշուշտ, տեղեակ է Վրկանների գոյութեանը: Վերջիններս յիշւում են երկու անգամ: Ըստ Պատմահօր՝ «Ասիայում կայ մի դաշտավայր՝ բոլոր կողմերից լեռներով շրջափակուած, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է քորասմներին եւ գտնւում է նոյն քորասմների,



հիւրկանների, պարթեւների, սարանգների եւ թամանների սահմաններում: Պարսից իշխանութեան հաստատումից յետոյ այն արդէն պատկանում է (պարսից) արքային: Արդ, դաշտավայրը շրջափակող լեռից հոսում է մի մեծ գետ, որի անունն է Ակէս: Այս գետը, բաժանուած լինելով հինգ թեւի, հնում իւրաքանչիւր թեւով ոռոգում էր վերոյիշեալ ժողովուրդներից իւրաքանչիւրի երկիրը, քանի որ ամէն մի կիրճից մի թեւ էր հոսում»[109]: Հերոդոտոսի յաջորդ հաղորդմամբ «Հիւրկանները եւս զինուած էին պարսիկների նման. նրանց առաջնորդն էր Մեգապանոսը, որը հետագայում դարձաւ Բաբելոնի կառավարիչ»[110]: Յոյն-պարսկական կռիւների առնչութեամբ յոյն պատմագէտը յիշատակում է նաեւ կասպերին, որոնք «արշաւել էին այծենի հագած, եւ իրենց տեղական եղէգնեայ աղեղներով ու ակինակներով զինուած: Նրանց հանդերձանքը այսպիսին էր. իսկ նրանց առաջնորդն էր Արտիւսիքոսի եղբայր Արիմարդոսը»[111]:

Հասկանալի է, որ կասպերի եւ վրկանների միաժամանակ յիշատակութիւնը պատմիչի կողմից կասկածի տակ է առնում Կասպերի երկրի եւ Վրկանի նոյնացման հնարաւորութիւնը, սակայն Վրկանից աշխարհի անուան բացակայութիւնը սատրապութիւնների ցուցակում նոյնքան տարօրինակ է, որովհետեւ տարածական առումով պէտք է ենթադրել, որ դատարկութիւն է առաջանում, կամ էլ այն վարչականօրէն ներառնուած է մէկ այլ երկրի մէջ: Այս առումով հետաքրքրութիւն են ներկայացնում Բեհիսթունեան ժայռի՝ Դարեհ Ա-ի թողած եռալեզուեան արձանագրութեան տուեալները: Պարսից թագաւորը յայտնում է, որ իրեն հպատակ են եղել 23 երկրներ, որոնց կազմում են Պարթեւքը, Սոգդը, Բակտրիան, Խորեզմը, Սագաստանը եւ այլք, սակայն չի յիշատակում Վրկանը[112]: Այսուհանդերձ, Դարեհ Ա արքան նոյն արձանագրութեան մէջ մէկ այլ կապակցութեամբ գրում է, որ «Պարթեւն ու Վարկանան իմ դէմ ապստամբեցին եւ յարեցին Ցրավարտիշին»[113]: Ի՞նչ է ստացւում: Մի կողմից՝ երկրանունը բաց է թողնուած ապստամբ երկրների ցուցակում, իսկ միւս կողմից՝ Վարկանան (=Վրկան) ապստամբ երկիր է: Որո՞նք են հնարաւոր եզրակացութիւնները: Թերեւս, Վրկանը, պարզապէս թիւրիմացաբար տեղ չի գտել հպատակ երկրների ցուցակում կամ էլ այն վարչականօրէն միացուած է եղել հարեւան երկրներից որեւէ մէկին: Առաւելութիւն տալ դրանցից որեւէ մէկին, դժուար է, սակայն այն հանգամանքը, որ Դարեհը հպատակ երկրների թիւը յատուկ սահմանում է 23, ապա, կարծես թէ գերադասելի է երկրորդ եզրակացութիւնը: Շատ հաւանական է, որ Պարթեւքն ու Վարկանան, յարելով Ցրավարտիշին եւ ապստամբելով աքեմէնեան գահակալի դէմ, պարտութիւն են կրել ու յանձնուել մի կուսակալի կառավարմանը, որով էլ պայմանաւորւում է Վարկանա-Վրկանի բացակայութիւնը հպատակ երկրների ցուցակում:

Հարկ է պատասխան տալ նաեւ մէկ հարցի եւս: Բիհիսթունեան արձանագրութեան հպատակ երկրների ցուցակը արտայայտում է սատրապութիւնների ստեղծմանը նախորդող վարչա-քաղաքական բաժանման կացութիւնը, թէ՞ վարչական բարեփոխումներին յաջորդած կացութիւնը: Ըստ իս՝ անտարակոյս է, որ արձանագրութեան հպատակ երկրների ցուցակը լոկ արտայայտում է ապստամբութեան պարտութեանն անմիջապէս յաջորդող ժամանակաշրջանը, որովհետեւ հազիւ թէ այն գրուէր վարչա-քաղաքա-

© National Library of Armenia

կան մեծ վերափոխութիւնների կենսագործումից յետոյ: Հետեւաբար, շատ էլ չպէտք է կառչել արձանագրութեան հպատակ երկրների եւ հերոդոտեան սատրապութիւնների ցուցակների տարբերութիւններից: Առաջինը դեռեւս իր վրայ չի կրում վարչա-քաղաքական բաժանումներ իրականացնելու պետական նպատակասլացութիւնը, ինչ չի կարելի ասել, ինչպէս վերը տեսանք, երկրորդի մասին:

Պարզելով, որ վարչական բարեփոխումների հետեւանքով հնարաւոր էին երկրների եւ երկրամասերի ենթակայութեան փոփոխութիւնները՝ կարծում ենք, որ Ու. Հաուի եւ Ջ. Ուելսի ենթադրութիւնն ունի մեծ հաւանականութիւն, առաւել եւս, որ հերոդոտեան ցուցակում բացակայում է Վրկանից աշխարհի անունը: Տասնմէկերորդ սատրապութեան կազմում յիշատակուած ցեղերից առաւել յստակ տեղադրւում են դարեյտները: Պտղոմէոսի «աշխարհագրութիւնը» նրանց տեղադրում է Կասպից ծովից հարաւ, ներկայիս Ռեյ քաղաքի մերձակայքում (պատմական Ռագայի): Ըստ հեղինակի՝ «Զագրոս լեռից դէպի արեւելք սագարտիացիներն են, սրանցից յետոյ՝ հասնելով մինչեւ Պարթիա, Քորոմիթրենէ, որից դէպի հիւսիս Էլիմաիսն է. նրանից դէպի արեւելք բնակւում են տապուրները: Քորոմիթրենէից դէպի հարաւ սիդիկներն են եւ Սիգրիանիկէն եւ Ռագիանէն. նրանց մօտ՝ Յասոնիոն լեռան ստորոտում վադասներն են եւ Դարեյտիս գաւառը եւ ամբողջ Պարսքի երկայնքով՝ Սիւրոմիդիան»[114]: Այս նկարագրութիւնից դժուար չէ հետեւցնել, որ Ռագիանէն Ռագա կամ Ռեյ քաղաքի շրջակայքն է, հետեւաբար Յասոնիոն լեռը ոչ այլ ինչ է, բայց եթէ Դամաւանդ լեռը, որը գտնւում է Իրանի մայրաքաղաք Թեհրանից շուրջ 120 կմ հիւսիս-արեւելք: Հաղորդման համաձայն՝ վադասներին եւ դարեյտներին պէտք է տեղադրել Յասոնիոն կամ Դամաւանդ լեռան հարեւանութեամբ: Հարցիս քննութեան առումով անգամ կարեւոր էլ չէ, թէ վերջինները տարածւում էին լեռից հիւսիս, հարաւ, թէ՞ արեւելք: Սակայն որոշակի է մի իրողութիւն: Եթէ Հերոդոտոսի սատրապութիւնների ցանկում տասնմէկերորդ սատրապութեան նկարագրութիւնը տրուած է հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք ուղղութեամբ, ապա կասպերը նոյնական են յունա-հռոմէական աղբիւրների եւ հայ պատմիչների յիշատակած Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափի կասպերին, սակայն արեւելքից արեւմուտք ուղղուածութեան դէպքում, կասկածից վեր է, որ սատրապութեան կասպերը նոյնական են վրկաններին: Արդ, որի՞ն տալ գերադասութիւնը: Ըստ իս՝ սկզբնաղբիւրները խօսում են յօգուտ երկրորդի, որովհետեւ, երբ քննութեան ենք առնում Կասպից ծովի առափնեայ շրջանում ապրող ցեղերի տեղորոշման խնդիրը, ապա, համաձայն Ստրաբոնի, Վրկանների եւ արիանների միջեւ բնակւել են տապիրները կամ տապուրները, իսկ Վրկաններից այն կողմ ամարդները, անարիակները, կադուսիները (կատիշները), աղուանները, կասպերը, ուիտիները եւ այլ ժողովուրդներ մինչեւ սկիւթները[115]: Յոյն աշխարհագրագէտի միւս հաղորդմամբ՝ Կասպից ծովի արեւելեան ափին բնակուող դահերին կամ ապարներին Վրկանից աշխարհից բաժանում է անապատը եւ Կասպից ծովը շրջապատող լեռների լանջերին բնակւում է աղուանների եւ հայերի մի մասը՝ զբաղեցնելով մի ոչ մեծ հատուած, իսկ մնացած մեծագոյն մասը բնակատեղի էր ծառայում գելերի, կադուսիների (կատիշների), ամարդների, ուիտիների եւ անարիակների համար[116]: Ելնելով այն իրողութիւնից, որ տասնմէսատրապութեան



մէջ յիշատակութիւն չկայ ամարդների եւ կատիշների մասին, որոնք կարող էին եւ բացակայել Մեդիայի սատրապութեան նկարագրութեան մէջ, սակայն հազիւ թէ չյիշատակուէին պաւսիկների եւ պանտիմաթների անյայտ ցեղերի արձանագրուելու դէպքում՝ կարծում եմ, պիտի հիմնաւորուած համարել վերը առաջ քաշուած Կասպ-Վրկան նոյնացումը:

Հասկանալի է, որ այս դէպքում էլ բացատրութիւն է պահանջում Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափին բնակուող կասպերի խնդիրը, որոնք, Ստրաբոնի վկայութեամբ, I դարում կորցրել էին իրենց ինքնութիւնը՝ հաղորդելով տեղանքին լոկ իրենց անունը: Կասպերը կարող էին յայտնուել Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափերին կա՛մ հիւսիսային Կովկասից, կա՛մ էլ Միջին Ասիայից: Կասպերն, անշուշտ, պատկանել են Աղուանից թագաւորութիւնը բնակեցնող ցեղերի թուին: Սակայն Կասպերի տեղադրութեան եւ Այսրկովկասում հաստատուելու հետ կապուած սկզբնաղբիւրների տեղեկութիւնների որոշ հակասականութիւնը պահանջում է բացատրութիւններ: Ստրաբոնի՝ Կասպից ծովին առափնեայ ցեղերի նկարագրութեան մէջ ասուած է, որ ծովի շրջագծով վրկաններից յետոյ բնակւում են ամարդները, անարիակները, կադուսիները (կատիշները - Յ. Բ.), ալբանները, կասպերը, ուիտիները եւ, հաւանաբար, մինչեւ սկիւթները այլ ժողովուրդներ[117]: Էրատոսթենէսի համաձայն՝ «տեղաբնիկները Կովկասը անուանում են Կասպի (Κασπιον), հաւանաբար վերակոչելով կասպերի անունով»[118]: Ա. Յակոբեանն իրաւացիօրէն նշում է, որ, բերուած տեղեկութիւնների համաձայն, կասպերը տեղադրւում են ալբաններից հիւսիս, Կովկասեան լեռների եւ Կասպից ծովի միջեւ[119]: Դրան համահունչ են Պոմպոնիոս Մելայի եւ Դիոնիսիոս Ալեքսանդրացու տեղեկութիւնները, որոնցից առաջինի համաձայն՝ Կասպից ծովը Հիւսիսային ովկիանոսին միացնող նեղուցի[120] ափերին բնակւում էին քոչուոր սկիւթները, իսկ այնուհետեւ Կասպից ծոցի մօտ կասպերը եւ ամազոնուհիները, ... Վրկանից ծոցի մօտ ապրում էին աղուանները, մոսխերը, վրկանները[121]: Մէկ այլ կապակցութեամբ, Պոմպոնիոս Մելան գրում է, որ Կովկասեան լեռները կոչւում էին Տաւրեան, Մոսքական, Ամազոնեան, Կասպիական, Կորաքսեան եւ Կովկասեան՝ կապուած նրանց մերձակայքում ապրող ժողովուրդների անուանումների հետ[122]: Ինչ վերաբերում է Դիոնիսիոս Ալեքսանդրացուն, ապա նա տալիս է մերձծովեան ժողովուրդների ներքոյիշեալ նկարագրութիւնը. «Ես կպատմեմ ամէնը այն մասին, թէ ինչ ցեղեր են ապրում նրա (Կասպից ծովի - Յ. Բ.) շուրջը, սկսելով հիւսիս-արեւմտեան կողմից: Առաջինը սկիւթներն են, որոնք բնակեցնում են Կրոնիան ծովին (Հիւսիսային ովկիանոսին - Յ. Բ.) մերձակայ ափը Կասպից ծովի բերանով. այնուհետեւ ունները (Οὔννοι), իսկ նրանցից այն կողմ կասպերը, սրանցից յետոյ ռազմաշունչ կադուսիները (կատիշները) եւ աղուանները, որոնք բնակւում են լեռնային երկրում. նրանց մերձակայքում են մարդերը, վրկանները եւ տապիրները»[123]: Հետագայ հեղինակներին անդրադառնալը իմաստ չունի, որովհետեւ նրանք միայն կրկնում են վերը բերուած տեղեկութիւնները:

Արդ, ինչ եզրակացութիւնների կարելի է յանգել: Դեռեւս 80-ական թթ. երիտասարդ ուսումնասիրող Ա. Յակոբեանը ցոյց է տուել, որ վերը բերուած տեղեկութիւնների կասպերը չեն նոյնանում Ստրաբոնի կողմից Փայտակարան աշխարհի կամ Կասպքի կասպերին: Նա

© National Library of Armenia

գտնում է, որ վերը բերուած հաղորդումների կասպերին պէտք է տեղադրել Կասպից ծովի ափին, սակայն ալբաններից հիւսիս: Մեր կողմից կամենում ենք աւելացնել, որ որքան էլ Ստրաբոնի նշուած եւ Պոնպոնիոս Մելայի ու Դիոնիսիոս Ալեքսանդրացու տեղեկութիւնները համերաշխ են, այնուամենայնիւ կան ուշադրութեան արժանի տարբերութիւններ: Այսպէս՝ Ստրաբոնի մօտ կասպերը յիշւում են ալբան-աղուանքներից հիւսիս, որոնցից էլ աւելի հիւսիս տեղադրւում են ուիտիները, Պոմպոնիոս Մելան սկիւթներից յետոյ թուարկում է հիւսիսից հարաւ ուղղութեամբ կասպերին եւ ամազոնուհիներին, այնուհետեւ ալբաններին, մոսքերին եւ վրկաններին, իսկ Դիոնիսիոս Ալեքսանդրացին՝ Վոլգայի գետաբերանից սկսելով, յիշատակում է սկիւթներին, ուններին, կասպերին եւ այնուհետեւ կադուսիներին, ալբաններին, մարդերին, վրկաններին եւ տապիրներին: Համեմատութիւնից կարելի է անգամ եզրակացնել, որ ուիտիների մէկ այլ անունն էր ամազոնուհիներ, կապուած, հաւանաբար, մայրիշխանական տոհմական համայնքի գոյութեան հետ: Οὔννοι-ը անվերապահօրէն Οὗτοι-ի գրչագրական աղաւաղումն է[124], հետեւաբար այն հոների հետ նոյնացնելու փորձերը բնաւ էլ արդարացուած չեն[125]: Անհաւատալիօրէն կադուսիները յայտնուել են ալբաններից հիւսիս, որը հակասում է միւս հեղինակների տուեալներին եւ, ամենայն որոշակիութեամբ, ճիշտ չէ: Բերուած տեղեկութիւնների համաձայն՝ կասպերը յայտնւում են Հիւսիսային Կովկասում, բայց միաժամանակ նրանք Ստրաբոնի օրերում ապրում էին Կասպք-Փայտակարանի եւ Աղուանից Կասպքի շրջանում: Հետեւաբար պէտք է եզրակացնել, որ տեղեկութիւնների նշանակալից մասը ծագում է շատ աւելի հին ժամանակներից՝ կապուած, թերեւս, Պատրոկլէսի արշաւի հետ, եւ որ տեղի է ունեցել կասպերի գաղթ Հիւսիսային Կովկասից Այսրկովկաս: Անշուշտ, տեսականօրէն կարելի է ենթադրել, որ կասպերը կարող էին տեղափոխուել Այսրկովկաս Միջին Ասիայի եւ հիւսիս-արեւելեան Իրանի տարածքներից, սակայն այդ պէտք է բացառել՝ ոչ միայն ելնելով վերը բերուած տուեալներից, այլեւ մէկ այլ ոչ պակաս կարեւոր իրողութիւնից:

Յայտնի է, որ Իբերիան կամ Վիրքը անուանուել է նաեւ Վարջան[126], որի նախնական ձեւն, անկասկած, լինելու էր Վարգան կամ Վարկան: «Աշխարհացոյց»-ը Քուստ-ի - Խորասանի կամ Արեւելեան Քուստի մէջ յիշատակում է Վարկան երկիրը կամ աշխարհը[127], որը նոյնանում է յունա-հռոմէական աղբիւրների Հիւրկանիային եւ հայկական սկզբնաղբիւրների Վրկանից աշխարհին: Կարելի է, անշուշտ, ենթադրել, թէ նմանութիւնը պատահական է, ինչպէս, օրինակ, Պիրենեյան թերակղզու Իբերիան եւ Վիրք-Իբերիան[128]: Սակայն այս դէպքում, ըստ իս, նմանութիւնը բոլորովին էլ պատահական չէ: Վրացական Վարջանը պէտք է սերտ աղերս ունենայ Վրկան կամ Վարկան երկրանունը: Հետաքրքիր է նաեւ, որ Վիրքի Վարջան անունը ուղեկցում են Կասպի քաղաքի եւ Կովկասեան լեռներին տրուած Կասպիական լեռներ անուանումները: Վարկանը կամ Վարգանը պէտք է ծագէր «գայլ» բառից, այսինքն՝ պէտք է նշանակէր «Գայլի երկիր»[129]: Հետեւաբար հնարաւոր եզրակացութիւնն այն է, որ էթնոնիմը առաջացել է ցեղային տոտեմ հանդիսացած «գայլ» անունից: Մենք վերը արդէն փորձեցինք պարզաբանել կասպ-վրկան նոյնութեան հնարաւորութիւնը: Այն միանգամայն տրամաբանական էր Վրկանից աշխարհի



բնակչութեան համար: Այդ միանգամայն իրական է նաեւ Վիրքի առնչութեամբ: Կասպ-վրկանների մի մասը, դատելով կցկտուր անուղղակի նիւթից, հաստատւում է Արեւելեան Վրաստանի տարածքում՝ նրան փոխանցելով Վրկան-Վարկան-Վարջան անունը, իսկ նրա քաղաքներից մէկին՝ Կասպի անունը: Յաւօք, այդ տեղաշարժը չի արձանագրուել աղբիւրներում[130], սակայն կարելի է ենթադրել, որ այն կատարուել է, թերեւս, Դարեհ Ա Վշտասպի վարչական վերակառուցումներից եւ Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքներից յետոյ՝ հիմք ունենալով Կասպերի գտնուելը Հիւսիսային Կովկասում[131]: Հասկանալի է, եթէ կասպերը հաստատուել են Այսրկովկասում մ. թ. ա. V դարի կէսերից յետոյ, ապա նրանք չէին կարող յիշատակուել Այսրկովկասի տարածքում գտնուող որեւէ սատրապութեան կազմում:

Կրկին վերադառնալով Կասպերի եւ Վրկանների նոյնացման խնդրին՝ հարկ է նշել, որ պասիկները եւ պանտիմաթները պէտք է տեղադրուեն Վրկանից արեւմուտք եւ դարեյտներից արեւելք[132]: Նիւթն այնքան սակաւ է, որ առարկութիւնների պակաս չի լինի: Սակայն ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս, որ միայն այս մեկնաբանութեան դէպքում է հնարաւոր, մասնաւորապէս՝ սասպեյրների եւ Մեդիայի հարեւանութիւնը: Այլ խօսքով՝ Դամաւանդ-Յասոնիոն լեռից արեւմուտք ընկած առափնեայ հողերը, որոնք օղակում են Կասպից ծովը հարաւարեւմուտքից, պէտք է մաս կազմէին Մեդիա-Մարաստանի: Ըստ որում նրանց սահմանակցութեան շրջանը պէտք է լինէր Կուր գետի ստորին աւազանը, ամէն ինչից դատելով, Երասխի եւ Կուրի միախառնումից մինչեւ Կասպից ծովն ընկած շրջանում:

Տասնմէկերորդ սատրապութիւնը Վրկանի եւ շրջակայ տարածքներում տեղադրելու դէպքում, չնայած վերը կատարուած քննութեանը, շարունակում է արտաքնապէս օրակարգում մնալ տասնհինգերորդը Այսրկովկասում տեղորոշելու խնդիրը, որովհետեւ սակ-սկիւթներն իրօք հաստատուել էին Գանձակ (ներկայիս՝ Գեանջա) քաղաքի շրջակայքում, երկրամասին տալով իրենց անունը (Սակասենէ-Շակաշէն), իսկ նրանցից ոչ շատ հեռու գտնւում է յունա-հռոմէական եւ հայկական աղբիւրների Կասպիանէ-Կասպք երկրամասը: Մեր քննութիւնը բացառում է նման հնարաւորութիւնը եւս: Ըստ որում դրա բանալին պէտք է փնտրել պարսկական սեպագիր արձանագրութիւններում:

Դարեհ Ա-ի Բիհիսթունեան ժայռի վրայ թողած եռալեզուեան արձանագրութեան մէջ, ինչպէս վերը նշել ենք, պարսից արքան յիշատակում է իրեն հպատակ 23 երկրների անուններ: Դրանց թւում հանդիպող Saka-Սակա երկիրը հանդիպում է Գադարա (= Գանդարա), Սատագուշ կամ Սատագիդիա եւ Արաքոսիա երկրների մերձակցութեամբ կամ հարեւանութեամբ[133]: Այս իրողութիւնը շատ ուսումնասիրողների, այդ թւում՝ նաեւ մեզ, իրաւունք է տալիս տասնհինգերորդ սատրապութիւնը տեսնելու Միջին Ասիայի տարածքում: Մեր խնդիրը չէ, անշուշտ, մանրակրկիտ քննարկել, թէ սակ-սկիւթները Միջին Ասիայի յատկապէս որ շրջաններն էին բնակեցնում, սակայն բերուած ցանկացած տեղադրութեան դէպքում բացառւում է սրանց Այսրկովկասում տեսնելու հնարաւորութիւնը: Կայ մի հանգամանք եւս, որն արժանի է լուրջ ուշադրութեան: Բիհիսթունի արձանագրութեան մէջ վերջին հպատակ երկիրը Մական է, որն զբաղեցրել է Իրանի եւ Բելուջիստանի հարաւային շրջանները՝

© National Library of Armenia

դուրս գալով Հնդկական ովկիանոս, եւ այժմ յայտնի է Մոկրան անունով: Երկրների ցանկում բացակայում է Հնդկաց աշխարհը, որը կազմում էր քսաներորդ սատրապութիւնը[134]: Վերը մենք ցոյց տուեցինք, որ տասնութերորդ, տասնիններորդ եւ քսաներորդ սատրապութիւնները կազմուել են վարչական վերակառուցումների վերջին փուլում: Այսինքն՝ Բիհիսթունի արձանագրութիւնը գրելիս Դարեհ Ա-ը դեռեւս չէր կարողացել նուաճել ո՛չ հնդիկներին, ո՛չ էլ սասպեյրներին, ալարոդներին եւ մոսքերին ու կոլքերին, ինչպէս նաեւ Սեւ ծովի հարաւարեւելեան առափնեայ շրջանը բնակեցնող ցեղերին: Հետեւաբար, Վ. Վ. Ստրուվէի կողմից արձանագրութեան սակերին Սակասենէ-Շակաշէնի սակերի հետ նոյնացնելու փորձը[135] լուրջ կռուաններ չունի: Աւելին՝ այն հակասում է թէ՛ Հերոդոտոսի միւս տուեալներին եւ թէ՛ պարսկական արձանագրութիւնների հաղորդումների տրամաբանութեանը[136]: Անկախ այն հանգամանքից, հայաստանեան սակերը կորցրել էին իրենց էթնիկ դիմագիծը V դ., թէ ոչ, նրանք պէտք է համարուէին Արմենիայի բնակիչներ կամ էլ վերագրուէին սասպեյրների ցեղախմբին: Բեհիսթունի արձանագրութիւնը դեռեւս չի արձանագրում սասպեյրների ենթակայութիւնը Դարեհ Ա-ի տէրութեանը, հետեւաբար սակերի յիշատակութիւնը սասպեյրների անուան ներքոյ հնարաւոր չէ: Ինչ վերաբերում է առաջին տարբերակին, ապա անտարակոյս է Սակասենէ-Շակաշէնի Արմենիայի մէջ վարչականօրէն գտնուելու իրողութիւնը: Հայաստանը մինչեւ Աքեմէնեան Պարսկաստանի գերիշխանութիւնն ընդունելը ուժեղ թագաւորութիւն էր՝ ռազմական մեծ հնարաւորութիւններով: Ցայտնի իրողութիւն է, որ ամէն մի պետութիւն ձգտում է իր սահմանները հասցնել որոշակի բնագծերի՝ լեռնաշղթաների, գետերի, ծովափի եւ այլն: Հայաստանի հիւսիս-արեւելքում այդպիսի բնագիծ էր Կուր գետը, որը եւ սահման է հանդիսացել Աքեմէնեան Պարսկաստանի համար Բիհիսթունեան արձանագրութիւնը փորագրելու ժամանակ: Ուստի խիստ տրամաբանական է սակերի կամ նրանց այսրկովկասեան հատուածի Հայաստանին վերաբերելը: Գանձակի սակերից եւ մերձկուրեան կասպերից եթէ սատրապութիւն կազմուած լիներ, ապա այն ոչ միայն կը հակասէր Հերոդոտոսի միւս տուեալներին, այլեւ խիստ զարմանալի պիտի լինէր այս անշնան տարածաշրջանի կողմից 250 տաղանդի չափով հարկատուութիւնը:

Այժմ, հետադարձ հայեացք նետելով կատարուած քննութեանը՝ կարող ենք արձանագրել, որ Կուրից հիւսիս մինչեւ Կովկասեան լեռներն ընկած տարածքը զբաղեցնում էին մատիենները, սասպեյրները եւ ալարոդները, որոնք, սակայն, Պատմահօր մէկ այլ վկայութեամբ՝ յայտնի էին նաեւ մէկ ընդհանրական սասպեյր անունով, եւ այդ պատճառով էլ Կողքիսից մինչեւ Մեդիա Հերոդոտոսը արձանագրում է միայն մէկ ժողովուրդ՝ սասպեյրներին: Ելնելով վերը շարադրուածից՝ կարելի է յստակեցնել տասնութերորդ սատրապութեան սահմանները: Հիւսիսում սատրապութեան սահմանը համընկնում էր Աքեմէնեան Պարսկաստանի պետական սահմանին եւ անցնում էր Կովկասեան մեծ լեռնաշղթայով՝ հասնելով մինչեւ ներկայիս Դերբենդ քաղաքի հիւսիսային մատոյցները (հնում՝ Ճորա պահակի շրջան), արեւելքում՝ Կասպից ծովով մինչեւ Կուրի գետաբերանը, հարաւում՝ Կուր գետով եւ Թռեղքի լեռնաշղթայի ջրբաժանով կամ էլ Խրամ գետով, սահմանակցելով տասներեքերորդ սատրապութեան մէջ մտնող Հայաստանին, եւ արեւմուտքում, ամենայն հաւանականութեամբ, Սուրամի լեռներով մինչեւ Կովկասեան մեծ լեռնաշղթան, սահմանակցելով տասնիններորդ սատրապութեանը: Այսուհանդերձ ծագում է մի հարց եւս: Հայաստանը տարածքով մեծ երկիր է, ուստի արդեո՞ք տրամաբանական է նրա կողմից ընդամէնը 400 տաղանդ հարկ մուծելը: Եւ, իրօք, առաջին հայեացքից էլ կարծես պարզ է, որ Հայաստանի հարկաչափը, եթէ զիջէր էլ Միջագետքի եւ Եգիպտոսի հարկաքանակին, այնուամենայնիւ շատ մեծ տարբերութիւն չպէտք է ունենար այն դէպքում, երբ իրականում Բաբելոնից եւ մնացեալ Ասորեստանից ստացուած հարկը գերազանցում էր տասներեքերորդ սատրապութեան հարկաչափը 600 տաղանդով, իսկ Եգիպտոսից ստացուածը՝ 300 տաղանդով[137]: Կարծում ենք, որ հարցի պատասխանը տալիս է Ստրաբոնի «Աշխարհագրութիւնը», որի համաձայն Արմենիան տարեկան 20000 քուռակ էր ուղարկում պարսից թագաւորին Միթրայի տօնի համար[138]: Անշուշտ, կարելի է կարծել, թէ 20000 քուռակները ուղարկուել են 400 տաղանդ հարկի դիմաց, սակայն Կիլիկիայի կապակցութեամբ Հերոդոտոսի յայտնած այն տեղեկութիւնը, թէ կիլիկեցիները պարսից թագաւորին տալիս էին տարեկան 360 ճերմակ ձի եւ 500 տաղանդ արծաթ[139], այդ կարծիքը ջրում է: Պարզապէս մեզ անյայտ պատճառով Հերոդոտոսի երկը տասներեքերորդ սատրապութեան հարկերի մէջ մոռացել է արձանագրել 20000 քուռակներ հարկ տալը:

Ամփոփենք: Կարելի է վստահօրէն եզրակացնել, որ XVIII սատրապութիւնը, որ Հայագէտների մի մեծ ծաղկաբոյլ մշտապէս փորձել է տեղադրել Արեւելեան Հայաստանի տարածքում, Հայաստանում չի գտնուել, որն ամբողջութեամբ՝ մտել է XIII սատրապութեան մէջ:



## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 *Հերոդոտոս*, Պատմութիւն ինը գրքից, թարգմանութիւնը Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1986, III, 90:

2 Բնագրի Ἀρμενίον–ը թարգմանում են եւ «արմենիներ» եւ «Արմենիա»: Ըստ Ս. Կրկեաշարեանի երկու թարգմանութիւնն էլ հնարաւոր են, սակայն առաւելութիւնը տուել է «արմենիներին»: Մեր կարծիքով, հազիւ թէ Հայաստանը որպէս երկիր չնշուէր, առաւել եւս, որ զբաղեցնում էր սատրապութեան տարածքի հիմնական, գերակշիռ մասը:

3 *Հերոդոտոս*, III, 93:

4 Անդ, III, 94:

5 Գ. *Սարգսեան*, Պատմահայր Հերոդոտոս, տե՛ս Հերոդոտոս, էջ 576:

6 Այսպիսի կարծիք են յայտնել այնպիսի նշանաւոր հայագէտներ, ինչպիսիք են Հ. Հիւբշմանը եւ Ց. Մանանդեանը: Ըստ առաջինի՝ այսրեփրատեան Հայաստանը պարունակել է իր հետագայ 15 նահանգներից հազիւ չորսը՝ «Չորրորդ Հայքը (իմա՛ Ծոփքը - Ց. Բ.), Աղձնիքը, Տուրուբերանը եւ Այրարատը» (Հ. *Հիւբշման*, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 16), իսկ երկրորդը, ընդհանուր առմամբ ընդունելով Հիւբշմանի եզրակացութիւնը, գտնում էր, որ այն «Ըստ իս մօտաւորապէս ճիշտ է, բայց կարօտ է որոշ ուղղման: Արմէնները, ինչպէս վերը ասացինք, դեռեւս հնագոյն ժամանակներում գրաւուած են եղել, հաւանօրէն, նաեւ մի քանի շրջաններ Վանայ լճի հարաւում եւ հարաւ-արեւելքում: Իսկ Այրարատ նահանգը նրանք գրաւել էին այդ ժամանակ ոչ ամբողջութեամբ» (*Ց. Մանանդեան*, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ. Ա, Երեւան, 1944, էջ 103): Ցարունակելով իր միտքը զարգացնել՝ Ց. Մանանդեանը գտնում է, որ հայերը կամ արմէնները Երուանդեանների առաջնորդութեամբ «դեռեւս երրորդ դարում մեր թուականութիւնից առաջ գրաւել էին Այրարատեան դաշտը, եւ Արմաւիրը դառել էր այստեղ Երուանդեան թագաւորութեան աթոռանիստ կենտրոնը: Ըստ երեւոյթին, հէնց այս թագաւորութիւնն է այն հին Արարատեան թագաւորութիւնը, որի մասին աղօտ եւ խառնաշփոթուած յիշողութիւններ պահպանուած են Խորենացու պատմութեան մէջ: Սելեւկեան շրջանի արմէնական այս երկիրը պարզապէս այն կորիզն է, որից հետզհետէ աճեց ու զարգացաւ հետագայում անկախ ու հզօր Մեծ Հայաստանը» (էջ 104): Այս տեսակէտը այլեւայլ կապակցութեամբ պաշտպանել են Ց. Մարքուարթը, Գ. Խալաթեանցը, Ց. Սանտալճեանը եւ ուրիշներ, որոնք հակուած էին մ. թ. ա. երրորդ դարի երկ-

© National Library of Armenia

որոդ կէսին Արմաւիրը տեսնելու Ատրպատականի Արտաբազանէս թագաւորի իշխանութեան ներքոյ (*J. Marquart*, Erānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, էջ 108: *Г. Халатьянц*, Очерк истории Армении, Москва, 1910, էջ 128: *Sandalgian Jos.*, Histoire documentaire de Arménie, t. II, Rome, 1917, էջ 414 եւ այլք): Եթէ նման տեսակէտը ինչ-որ չափով հասկանալի էր հայագիտութեան XX դարի սկզբի մակարդակի պայմաններում, ապա այն միանգամայն անյարիր է մեր օրերին, երբ պատմագիտական միտքը մեծ նուաճումներ է ձեռք բերել: Ուստի պարզապէս զարմանալ կարելի է, որ վերջերս ԱՄՆ-ում լոյս տեսած "The Armenian People from Ancient to Modern Times" (Volume I, Edited by Richard G. Hovannisian, University of California, Los Angeles, St. Martin's Press, New York, 1997, էջ 39) աշխատութեան հեղինակներից Նինա Գարսոյեանը "The Achaemenid Satrapy of "Armina", c. 550-330" (կարծում ենք, որ քարտէզի հեղինակը նա է, որովհետեւ համապատասխան բաժինը պատկանում է նրա գրչին) քարտէզում Այրարատից Արմինայի մէջ մտցնում է միայն Բասենի դաշտը եւ Երասխաձորը, իսկ մնացած հատուածը յատկացնում է այլեւայլ ցեղերի: Ասել է թէ՝ հեղինակը հաշուի չի առել հայագիտութեան վերջին ձեռքբերումները:

7 Տե՛ս մանրամասն *Յովհաննէս Կարագեոզեան*, Սեպագիր տեղանուններ, Երեւան, «Մագաղաթ», 1998, էջ 133–134, 234–235 եւ այլն: Տե՛ս նաեւ *Բ. Յ. Յարութիւնեան*, Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը. տե՛ս ՊԲՀ, 1994, թիւ 1-2, էջ 257-259:

8 *А. И. Доватур, Д. П. Каллистов, И. А. Шишова*, Народы нашей страны в "Истории" *Геродота*. Тексты, перевод, комментарий, изд. "Наука", Москва, 1982, с. 191-192.

9 *Junge J.*, Saka–Studien, տե՛ս Klio, 1939, Beiheft XLI, էջ 44f:

10 *Բ. Ա. Տուրաեւը, Վ. Մ. Մասսոնը, Ի. Մ. Դեակոնովը* եւ ուրիշներ:

11 *Дьяконов И. М.*, История Мидии, М.-Л., 1956, էջ 342 եւ այլն:

12 *Herodoti* Historiae. Recognovit brevique adnotatione critica instruxit Carolus Hude. Vol. I–II. Editio altera. Oxonii, 1912, III, 90–91: Տե՛ս նաեւ *Հերոդոտոս*, Պատմութիւն ինը գրքից, թարգմանութիւնը Սիմոն Կրկեաշարեանի, III, 90–91:

13 *Геродот*, История, в девяти книгах, Перевод и примечания Г. А. Стратановского, М., 1972, с. 517.

14 *Herodotus*, III, 91–92:

15 Անդ, III, 93:

16 Անդ, III, 97:

17 Անդ:

18 *Գ. Խ. Սարգսեան*, Պատմահայր Հերոդոտը, տե՛ս *Հերոդոտոս*, Պատմութիւն ինը գրքից, էջ 573–574: *А. И. Доватур, Д. П. Каллистов, И. А. Шишова*, Народы нашей страны в "Истории" *Геродота*. էջ 185, 178, 198: Մանրամասն տե՛ս *How W.W. Wells J. A.* Commentary on Herodotus, Oxford, 1928, I–II. *Weißbach W.*, Ματιηνή, RE, 1930, XIV.

19 *Herodotus*, I, 72:

20 Անդ, VII, 72:

21 Անդ, V, 49:

22 Անդ, I, 189:

23 Անդ, V, 52:

24 *Գ. Սարգսեան*, Պատմահայր Հերոդոտոսը. տե՛ս Հերոդոտոս, էջ 573: Հեղինակի կարծիքով, Հայաստանից սկիզբ առնող գետը, թերեւս Բոսֆոր-Կենտրիտեսն է եւ ոչ թէ Մեծ Զաբը: Սակայն այդ հնարաւոր չէ, որովհետեւ խօսքը վերաբերում է նոյնանուն գետերին եւ, որ կարեւոր է պարսից «Արքայական ճանապարհը» Տիգրիսը հատել է ոչ թէ Կենտրիտէսից հիւսիս, այլ հարաւ:

25 *Herodotus*, I, 202:

26 The Geography of *Strabo*, with an English translation by Horace Leonard Jones. In eight volumes, London, 1969, XI, XIV, 13:

27 *Strabo*, I, III, 4:

28 Անդ, II, I, 14. «Նոյնպէս է լինում Մատիենէում՝ Մարաստան, եւ, Սակասենէում ու Արաքսենէում՝ Հայաստան»:

29 Անդ, XI, VII, 2. «Նոյնը լինում է Մարաստանում՝ Մատիանէի մէջ եւ Հայաստանում՝ Սակասենէի ու Արաքսենէի մէջ»:

30 Անդ, XI, VIII, 8:

31 Անդ, XI, XIII, 2:

32 Անդ, XI, XIII, 7:

33 Անդ, XI, XIV, 8. «Հայաստանում կան նաեւ մեծ լճեր. սրանցից մէկն է Մանտիանէն (թարգմանում է Կապոյտ), որ, ինչպէս ասում են, Մայոտիսից յետոյ մեծագոյնն է աղի լճերի մէջ եւ տարածւում է մինչեւ Ատրոպատենէ եւ ունի աղահանքեր»:

34 Անդ, XI, XIII, 2:

35 Անդ, XI, XIII, 2. ծնթ. թիւ 3:

36 *Claudii Ptolemaei* Geographia, edidit Carolus Fredericus Augustus Noebbe, Tom I, Lipsiae, 1843, lib. VI, cap.2, § 2. Καδουσιών -... τοῦ μέσου τῆς συναπτούσης αὐτῷ λίμνης, καλουμένης Μαρτιανῆς...

37 Անդ, lib. VI, cap. 2, § 5 (թարգմանութիւնը Գ. Մուրադեանի):

38 Անդ, lib. VI, cap. 2, § 3 (Մեծ Հայքում լիճը յիշւում է Արսեսա անունով). VI, cap. 2, § 2:

39 Մանրամասն տե՛ս *Բ. Յարութիւնեան*, Հայ Արշակունիների ձեռնարկած իշխանութեան հարցի շուրջը, տե՛ս ՊԲՀ, 1988, թիւ 3-4:

40 *Pliny*, Natural History, with an English transl. in ten volumes, by *H. Rackham*, London, 1952–1962 (Loeb Classical library), Libri VI, 17, 18: Մօտաւորապէս նոյն տուեալներն է պարունակում *Պոլիբիոս*-ի «Պատմութիւն»-ը, որը կաղուսիներին յիշում է մատիենների հարեւանութեամբ (*Polybii* Historiae, rec. Fr. Hultsch, Berlin, Weidm., 1888–1892, V, 44, 9):



41 *Stephani Byzantii* Ethnicorum quae supersunt. Ex recentione Aug. Meinekii, t. I, Berlin, 1849, տե՛ս Μοσχοι. Տե՛ս նաեւ ՎԴԻ, 1948, թիւ 3, էջ 323:

42 *И. А. Джавахишвили*, Историко-этнологические проблемы Грузии, Кавказа и Ближнего Кавказа, Тбилиси, 1950 (վրաց.), էջ 18 եւ այլք (վերցուած է Ն. Խազարաձէի յօդուածից): *С. Н. Джанашиа*, Труды, II, Тбилиси, 1952 (վրաց.), էջ 53–55 (վերցուած է Ն. Խազարաձէի յօդուածից), *Г. А. Меликишвили*, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 266: *И. И. Дьяконов. Предыстория армянского народа, Ереван, 1968,* էջ 17, ծնթ. 19. *Н. В. Хазарадзе*, К вопросу о локализации матиенов в свете древнегреческих источников VI–V вв. до н. э., - տե՛ս ՊԲՀ, 1973, թիւ 2, էջ 201–210:

43 *Herodotus*, II, 94:

44 *Xenophontis* Expeditio Cyri, recensuit Guilelmus Gemoll, Editio minor, Bibliotheca Teubneriana, Lipsiae, 1910, IV, VII, 1–24, V, IV, 1–30, V, 1–3. Տե՛ս նաեւ *Քսենոփոն*, Անաբասիս, թարգմանութիւնը Սիմոն Կրկեաշարեանի, Երեւան, 1970, IV, VII, 1–24, V, IV, 1–30, V, 1–3:

45 *Б. А. Арутюнян.* К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII–IV вв. до н. э.,- տե՛ս ՊԲՀ, 1998, թիւ 1–2, էջ 235:

46 *И. И. Дьяконов*, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 218:

47 *Б. А. Арутюнян*, նշ. աշխ., էջ 233-246:

48 *Plinii Secundi C.*, Naturalis historiae, vol. 1-10. Cambridge, Mass.-London, 1950-1962 (Loeb Classical Library), VI, 4, 12-13:

49 Անդ, VI. 11. 29. Պլինիոսը եւս մէկ անգամ յիշում է մի ցեղ մոսքեն (Moscheni) անունով (VI, 10, 26), սակայն դժուար է ասել, թէ տուեալ դէպքում խօսքը վերաբերում է *Մոսքերին*, թէ Հայաստանի հարաւում հաստատուած *մուշկերի* մնացորդներին:

50 *Г. А. Меликишвили*, Наири-Урарту, Тбилиси, 1959, էջ 315. *И. И. Дьяконов*, Предыстория..., էջ 222:

51 *Յովհաննէս Կարագեոզեան*, Սեպագիր տեղանուններ, Երեւան, 1998, էջ 182:

52 *Xenophontis* Expeditio Cyri, V, VI, 36:

53 Այս մօտեցումը հասկանալի է դարձնում նաեւ Փոթիին տրուած Փաշդ անունը, որտեղ «դ»-ն աճական է: Իհարկէ, սկզբում աճականը եղել է «տ» հնչիւնը, սակայն վերջինս ժամանակի ընթացքում հնչեղանալով վերածուել է «դ»-ի: «Տ»-ի աճականը հնդեւրոպական երեւոյթ է եւ ընդհանրապէս Փասիս քաղաքանուան հետագայ փոփոխութիւնները կատարւում են հնդեւրոպական հնչիւնական օրինաչափութիւններով: *Փասիս* (իրականում՝ *Փասի*)-*Փասիտ-Փայիտ-Փաւտ-Փոտ-Փոթ-Փոթի*: «*Փոթի*» նոր արտասանութեան մէջ «*ի*»-ն վրացական վերջաւորութիւն է:

54 *Xenophontis* Expeditio Cyri, IV, VI, 4:

55 *Н. Г. Волкова*, Этнонимы и племенные названия Северного Кавказа, М., 1973, էջ 94:

56 Անդ, էջ 96–97:

57 «Անաբասիս»-ի տուեալների համաձայն, մ. թ. ա. V դ. *փասիանները* արդէն հայացած էին, որովհետեւ հայոց գիւղապետը յոյն զօրավարների այն հարցին, թէ ովքե՞ր են նրանց հարեւանները, յիշատակում է միայն խալիբներին, չնայած յոյները մինչեւ խալիբների երկիրը հասնելը ստիպուած եղան կտրել *փասիանների* եւ *տուրխների* երկրամասերը (IV, VI, 1–22, VII, 1–18):

58 *Strabo*, XI, II, 14:

59 *Stephani Byzantii* Ethnicorum, տե՛ս *Քարիմատներ*:

60 Անդ:

61 *Strabo*, XI, II, 18. «Մոսքիկէն, ուր գտնւում է սրբատեղին, բաժանւում է երեք մասի. առաջինը կոլքերի իշխանութեան տակ է, երկրորդը՝ վրացիների, իսկ երրորդին տիրում են հայերը»:

62 *Մ. Դեակոնովը* եւ ուրիշներ *սոմեխի* էթնանունը բխեցնում են խեթական աղբիւրների *Ցուխմա* եւ ասորեստանեան բեւեռագրերի *Սուխմու* երկրանունից (*И. И. Дьяконов*, Предыстория..., էջ 234, ծնթ. 113): Այս տեսակէտը, որ ծագում է Գ. Խալաթեանցից, պաշտպանել են նաեւ Բ. Պիոտրովսկին եւ Գ. Մելիքիշվիլին, սակայն իրաւացիօրէն մերժում է Ս. Երեմեանը («Հայ ժողովրդի պատմութիւն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Ա, էջ 240): Եւ իրօք, այն քննութիւն չի բռնում, որովհետեւ վրացական ցեղերի բնակութեան հարաւային սահմանագիծը շատ հեռու էր գտնւում Սուխմուի տարածքից:

63 *Josephi Flavii* Opera Omnia, recogn. Imman. Bekker, "Bibl. Teubneriana", I. 125:

64 *В. В. Латышев*, Известия древних писателей о Скифии и Кавказе,- տե՛ս ՎԴԻ, 1948, թիւ, 3, էջ 137, 293:

65 *Բ. Յ. Յարութիւնեան*, Հայաստանի, հայ-իրանական յարաբերութիւնների եւ Առաջաւոր Ասիայի հնագոյն պատմութեան մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII–VI դդ.), Երեւան, 1998, էջ 63–68:

66 *Մովսիսի Խորենացւոյ* Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, Ա, գլ. ԺԴ:

67 «Հայ ժողովրդի պատմութիւն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ա հտ., Երեւան, 1971, էջ 234:

68 *И. И. Дьяконов*, Предыстория..., էջ 223:

69 *Հր. Աճառեան*, Հայերէն արմատական բառարան, հտ. Գ, Երեւան, 1977, էջ 335:

70 «Հայ ժողովրդի պատմութիւն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ա. հտ., էջ 650–652:

71 *Herodotus*, VII, 78: Տե՛ս նաեւ *Հերոդոտոս*, Պատմութիւն ինը գրքից, VII, 78:

© National Library of Armenia

72 Անդ, I, 72:
73 *Xenophontis* Expeditio Cyrii, V, V, 1–3:
74 *Stephani* Byzantii Ethnicorum, տե՛ս *Տիբարենիա:*
75 *Xenophontis* Expeditio Cyrii, V, V, 3:
76 Սպիտակ ասորիների կամ լեկոսիրիացիների նման տեղադրութիւնը մնում է հաստատուն նաեւ Ստրաբոնի տեղեկութիւնների համաձայն: Ըստ նրա՝ Միհրդատ Զ Եւպատորը տիրում էր մի երկրի, որը տարածւում էր Հալիսից մինչեւ *տիբարանների* երկիրը եւ Հայաստան (XII, III, 1), ըստ որում նա Հալիսից արեւմուտք տեղորոշում է *պափլագոնիներին*, իսկ արեւելք՝ *կապադովկիացիներին* (XII, III, 2), որոնց նոյնացնում է *լեւկո-սիրիացիներին* (XII, III, 9, 12, 25):
77 *Xenophontis* Expeditio Cyrii, IV, IV, 4, 14, VII, VIII, 25:
78 Անդ, IV, IV, 14:
79 *Plinii Secundi C.* Naturalis historiae, VI, 10. 26. «Իսկ Արաքսը [սկիզբ է առնում - Ց. Բ.] նոյն լեռներում, որտեղ [սկիզբ է առնում] Եփրատը, [նրա ակունքից] 6 մղոն հեռաւորութեան վրայ, եւ, իր մէջ առնելով Ուսիս [իմա՛ Մուրսիս=Մուրց] գետը, ինքն իր հերթին, ինչպէս նշում էին շատերը, թափւում է Կիւրոսի մէջ եւ նրա հետ տարւում դէպի Կասպից ծովը»: Տե՛ս նաեւ «*Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ* յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 30, 31, 33:
80 *Xenophontis* Expeditio Cyrii, VII, VIII, 25:
81 *Herodotus*, IV, 40:
82 Անդ, IV, 37:
83 Անդ, I, 104:
84 Անդ, VII, 79:
85 *Բ. Բ. Լատիշեւ*, Известия древних писателей о Скифии и Кавказе, տե՛ս ՎԴԻ, 1947, թիւ 3, էջ 280:
86 Անդ, էջ 282. տե՛ս նաեւ *Ապոլլոնիոսի* «Արգոնաւորդների արշաւ»-ի սքոլիան:
87 Անդ, էջ 288:
88 ՎԴԻ, 1948, թիւ 3, էջ 268:
89 *Stephani Byzantii* Ethnicorum, տե՛ս *սապէրներ*:
90 *Բ. Ա. Արտիւնեան*, К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII–IV вв. до н. э., - տե՛ս ՊԲՀ, 1998, N 1–2, էջ 240–241:
91 «*Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ*», էջ 35: Համառօտ խմբագրութեան մէջ «Ասեաց փոր» է:
92 *Բ. Ա. Արտիւնեան*, К вопросу об этнической принадлежности..., էջ 240:
93 *Ի. Մ. Դիակոնով*, Предыстория..., էջ 17, 240:
94 *Գ. Ա. Մելիքիշվիլի*, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 102:
95 Herodotus, III, 97:
96 Անդ, III, 92:
97 Անդ, III, 93:
98 *Струве В. В.*, Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Л., 1968, էջ 18:
99 *Ի. Մ. Դիակոնով*, История Мидии, М.-Л., 1956, էջ 359:
100 *Ա. Ի. Դովատուր, Դ. Պ. Կալլիստով, Ի. Ա. Շիշովա*, Народы нашей страны в "Истории" *Геродота.*, էջ 196, ծնթ. 101:
101 Անդ:
102 *How W., Wells J.*, A Commentary of Herodotus, Oxford, 1928, I–II, տե՛ս *Ա. Ի. Դովատուր*, ..., Народы нашей страны..., էջ 196, ծնթ. 101: Հմմտ. *Junge J.*, Sake-Studien, տե՛ս "Klio", 1939, Beiheft XLI, էջ 84:
103 *Ի. Մ. Դիակոնով*, История Мидии, էջ 103, 364: Հմմտ. *Хлопин И. Н.*, Этнография державы Ахеменидов по Геродоту, "Страны и народы Востока" գրքում, М., 1969, вып. 87, էջ 286:
104 *Ի. Մ. Դիակոնով*, История Мидии, էջ 359:
105 *Струве В. В.*, Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, 55, 110.
106 Անդ:
107 *Ա. Ի. Դովատուր*, ..., Народы нашей страны..., էջ 196, ծնթ. 101:
108 *Stein H.*, Herodotus erklärt von H. Stein, Berlin, 1869, ad III, 92, 2: *Պիանքով Ի. Բ.*, "История Персии" Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э., ՎԴԻ, 1965, թիւ 2, էջ 45:
109 *Herodotus*, III, 117:
110 Անդ, VII, 62:
111 Անդ, VII, 67:
112 *Roland G. Kent*, Old Persian, grammer, texts, lexicon, Second Edition revised, New Haven, Connecticut, 1953, էջ 117: Տե՛ս նաեւ «Դարեհ Վշտասպի Բիսեթունեան արձանագրութիւնը», թարգմանութիւնը բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Գ. Մ. Նալբանդեանի, Երեւան, 1964, էջ 8:
113 Անդ, էջ 122, II սիւնակ, § 35. տե՛ս նաեւ «Դարեհ Վշտասպի Բիսեթունեան արձանագրութիւնը», էջ 17:
114 *Claudii Ptolemaei* Geographia, Lib. VI, cap. 2, « 6:
115 *Strabo*, XI, VIII, 8:
116 Անդ, XI, VII, 1:
117 Անդ, XI, VIII, 8:
118 Անդ, XI, 2, 5:
119 *Ա. Ա. Ակոպյան*, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, էջ 38:
120 Շատ անտիկ հեղինակներ Կասպից ծովը համարում էին Հիւսիսային ովկիանոսի ծոցը եւ ենթադրում էին նրանց միացնող նեղուցի գոյութիւնը: Այդ կարծիքը չէին կիսում Հերոդոտոսը, Պտղոմէոսը եւ մի շարք հեղինակներ:
121 *Բ. Բ. Լատիշեւ*, Известия древних писателей о Скифии и Кавказе, - տե՛ս ՎԴԻ, 1949, թիւ 1, էջ 284, 274:
122 Անդ:
123 Անդ. տե՛ս ՎԴԻ, 1948, N 1, էջ 240–241:



124 *Ա. Ա. Ակոպյան*, Албания-Алуанк..., էջ 39:
125 Անդ. *Джафаров Ю. Р.*, Гунны и Азербайджан, Автореф. дисс., Баку, 1981, էջ 4-5; *Ашурбейли С.*, Государство Ширваншахов (VI–XVII вв.), Баку, 1983, էջ 18:
126 «Աշխարհացոյց *Մովսէսի Խորենացւոյ*», էջ 40. «Քուստի Կապկոհ, որ կողմն Կաւկասու լերանց յորում են աշխարհ երեքտասան. Ատրպատական, Արմն (որ է) Հայք, *Վարջան*, որ է *Վիրք*, Ռան՝ որ է Աղուանք, ...»:
127 Անդ. «Քուստի Խորասան, որ է կողմ արեւելից. յորում է աշխարհ քսան եւ վեց, այսինքն զոր ասեմ. Անմադան, Կոշմ, *Վարկան*, Ապրշահր, Մրվ, ...»:
128 Այսուհանդերձ այդ խնդիրը յատուկ քննութեան կարիք ունի - Ց. Բ.:
129 *Roland G. Kent*, Old Persian, çÁ 206:
130 *Xenophontis* Expeditio Cyrii, I, V, 2:
131 *Այս հարցը կարող է նաեւ այլ լուսաբանում ստանալ «Կիւրոպեդիա»-ի տուեալների լոյսով:*
132 *Պաւսիկները* եւ *պանտիմաթները*, ցաւօք, այլեւս չեն յիշատակւում աղբիւրներում, որը եւ հնարաւորութիւն չի տալիս պարզելու ստուգապէս ոչ նրանց բնակութեան որոշակի տարածքը, ոչ էլ էթնիկական պատկանելիութիւնը: Ի. Մ. Դեակոնովը, թերեւս, այդ անորոշութեան պատճառով, հնարաւոր է համարում *պաւսիկների, պանտիմաթների* եւ *դարեյտների կադուսիական* կամ *կատիշական* ցեղեր լինելը եւ *անարիակների* մերձկասպեան ցեղախմբին պատկանելը (История Мидии, էջ 447): Մեր կարծիքով, վերոյիշեալ երեք ցեղերը աւելի շուտ կարող էին պատկանել *անարիակների* աշխարհին կամ *Վրկանից* ցեղախմբին, քան *կատիշներին*:
133 *R. G. Kent*, Old Persian, էջ 117. "Gadāra: Saka: Θatagušˇ: Harauvatis: (=Արաքոսիա)":
134 *Herodotus*, III, 94:
135 *Струве В. В.*, Этюды..., էջ 18 եւ այլք:
136 Կասպերի յիշատակութիւնը տասնմէկերորդ եւ տասնհինգերորդ սատրապութիւնների կազմում առիթ է տուել Ռայցին Կաշուլ-ին սրբագրելու Κάσπειροι, լենուելով Ստեփանոս Բիւզանդացու «5. v. Κάσπειρος - πόλις Πάρθων προσεχής τῇ Ἰνδικῇ» տեղեկութեան վրայ: Նոյնպիսի սրբագրութիւն նա կատարել է Հերոդոտոսի «Պատմութեան» մէջ (VII, 86. 2): Հ. Թեայնը վստահօրէն հրաժարւում է քննարկել *կասպերի* յարաբերակցութիւնը Κάσπειροι-ին կա՛մ Κασπεραῖοι-ին, կա՛մ էլ Քաբուլ գետի վրայ գտնուող Κάσπάτρος քաղաքի բնակիչներին (տե՛ս *Ա. Ի. Դովատուր*, ..., Народы нашей страны ..., էջ 96, ծնթ. 101): Այս խնդիրը, կարծում եմ, կարեւորութիւն է ներկայացնում եւ կարիք ունի առանձին քննութեան):
137 *Herodotus*, III, 91–92:
138 *Strabo*, XI, 14, 9:
139 *Herodotus*, III, 90:
137 *Herodotus*, III, 91–92:
138 *Strabo*, XI, 14, 9:
139 *Herodotus*, III, 90:

© National Library of Armenia

# TO THE LOCALIZATION OF THE XVIII SATRAPY OF ACHAEMENID EMPIRE

BABKEN HARUTYUNYAN


## Summary

*The Location of the XVIII Satrapy of Achaemenid Empire on the Territory of the Eastern Armenia is generally recognized in Historiography. According to the report of the Father of History Herodotus the mentioned Satrapy was inhabited by Matiens, Saspires and Alarodians. On the basis of data by greek-roman authors, of Persian cuneiform inscriptions and Armenian sources the present location is analysed in detail and its insdrency is argumentically proved. It is shown, that the Matiens of the XVIII Satrapy did not correspond and could not correspond to the inhabitants of the land of Matiene or Martiene in the area of lake Urmia, the Saspires being in the relationship with the tribes of Scythens in the basin of the river Tchorokh (Chorokh) couldn't be regarded as the inhabitants of the province of Sper, and the Alarodians, the so called Armenized Urartians. In reality the XVIII Satrapy of the Achaemenid Empire, established by the king of kings Darius I in the last phase of his administrative reforms, is localized on the territory of the Eastern Georgia or Iberia and Caucasian Albania (Aluank) which is right up to the Caspian Sea and the Pass of Derbend. The problem is examined on the broad background of administrative reforms of the Persian Court. Some other Satrapies are localized by the author too. The identity of the tribe of Hyrcanians or Vrcans with the tribe of Caspians is proved, and a hypothesis about the origin of the toponyms "Georgian", "Gruzia", and "Gurdjistan" and of the ethnonyms "Georgian", "Gruzin" and "Gurdji", is suggested the origin of which come from the name of the tribe Caspians or Hyrcanians settled down on the territory of the Eastern Georgia. They have retained their track in the toponyms of the town Caspi and Caucasian Mountains and according to some authors they carried another name as well, i.e Caspian Mountains. The author counts that in the light of the above mentioned solutions, economical possibilities of the XIII Satrapy stand clear (it stretches from the Seashore of the Black Sea and the region of Mazaca city (Cezarea) up to confluence of the rivers Kura and Araxe) paying 400 talents in silver and 20 thousand horses to the Persian Court.*






© National Library of Armenia